

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԱԳԱՆ
ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ՄԱՔՐՄԱՆ, ՆՈՐ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՑՄԱՆ,
ԱՌԿԱ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ
ՎԱԶԱԳԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ /ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀՈՇԱՀԱՄԱԼԻՐԻ
ՇՐՋԱԿԱ ՀԱՏՎԱԾԻՑ ՄԻՆՉԵՎ «ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի
ՀԱՐԱԿԻՑ ԿԱՄՈՒՐՋ/ ԷՍԹԵՏԻԿ ՏԵՍՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ
ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

Պայմանագիր N 14

ԳԻՐՔ 4

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Լրամշակված տարբերակ



Իսկ. № 250105 .

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՋԱԳԱՆ
ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ՄԱՔՐՄԱՆ, ՆՈՐ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՑՄԱՆ,
ԱՌԿԱ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ
ՎԱՋԱԳԱՆ ԳԵՏԻ ԱՎԱՋԱՆԻ /ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀՈՇԱՀԱՄԱԼԻՐԻ
ՇՐՋԱԿԱ ՀԱՏՎԱԾԻՑ ՄԻՆՉԵՎ «ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի
ՀԱՐԱԿԻՑ ԿԱՄՈՐՋ/ ԷՍԹԵՏԻԿ ՏԵՍՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՄ

Պայմանագիր N 14

ԳԻՐՔ 4

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Լրամշակված տարբերակ

Տնօրեն



Է. Մեսրոպյան

Նախագծի գլխավոր ինժեներ



Ռ. Բադալյովա

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ
ՎԱՉԱԳԱՆ ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ՄԱՔՐՄԱՆ, ՆՈՐ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ, ԱՌԿԱ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ և
ՎԱՉԱԳԱՆ ԳԵՏԻ ԱՎԱՋԱՆԻ /ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ
ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԻ ՇՐՋԱԿԱ ՀԱՏՎԱԾԻՑ ՄԻՆՉԵՎ «ԿԱՊԱՆԻ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՐԱԿԻՑ ԿԱՄՈՒՐՁ/ ԷՍԹԵՏԻԿ
ՏԵՍՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ**

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

- Գիրք 1** - Ընդհանուր դրույթներ և աշխատանքային գծագրեր
- Գիրք 2** - Տեխնիկական մասնագրեր
- Գիրք 3** - Աշխատանքային ծավալներ
- Գիրք 4** - Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հաշվետվություն
- Գիրք 5** - Նախահաշիվներ

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ
 ՎԱՉԱԳԱՆ ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ՄԱՔՐՄԱՆ, ՆՈՐ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ,
 ԱՌԿԱ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՎԱՉԱԳԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ
 /ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՉԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԻ ՇՐՋԱԿԱ ՀԱՏՎԱԾԻՑ ՄԻՆՉԵՎ
 «ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՐԱԿԻՑ ԿԱՄՈՒՐՁ/
 ԷՍԹԵՏԻԿ ՏԵՍՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 Լրամշակված տարբերակ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	6
2.1 Օգտագործվող հապավումներ.....	6
2.2. Օգտագործվող սահմանումներ և տերմիններ.....	6
2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրությունը և միջազգային պարտավորությունները.....	8
2.3.1 ՀՀ Օրենսդրություն.....	8
2.3.2 Կոնվենցիաներ և միջազգային պայմանագրեր.....	11
3. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	13
3.1 Ձեռնարկողի մասին տեղեկատվություն	13
3.2. Վաչագան գետի հունի մաքրման և հենապատերի ամրացման նախագծային առաջարկություններ	13
3.3. Նախագծային առաջարկներ	15
3.4. Այլընտրանքային տարբերակները	18
4. ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	20
4.1 Նախապատրաստական աշխատանքներ	20
4.2 Ծինարարական աշխատանքներ	20
5. ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	22
5.1. Նախաձեռնության գտնվելու վայրը և տեղանքը.....	22
5.2. Բնակլիմայական պայմաններ	24
5.3. Ջրային ռեսուրսներ	28
5.4. Մթնոլորտային օդ.....	30
5.5. Հողերի բնութագիրը.....	31
5.6. Մեյամիկ պայմանների բնութագիրը.....	32
5.7. Կենսաբազմազանություն.....	33
5.8. Աղմուկ և թրթռոց	38
6. ԱԶԴԱԿԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ.....	40

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ 42

7.1. Շինարարական աշխատանքների փուլ..... 42

7.1.1. Մթնոլորտային արտանետումներ 42

7.1.2. Կենցաղային և շինարարական թափոններ..... 49

7.1.3. Ջրային ռեսուրսներ 50

7.1.4. Հողային ռեսուրսների վրա ազդեցություն..... 52

7.1.5. Կենսաբազմազանության վրա ազդեցություն 52

7.1.6 Աղմուկ և թրթռումներ..... 52

7.1.7 Առողջության ու անվտանգության վրա ազդեցություն..... 53

8. ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 55

8.1. ՀՀ օրենք շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին 55

8.2. Շրջակա միջավայրի կառավարման պլան..... 56

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՎԱՉԱԳԱՆ ԳԵՏԻ ԶՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՏԱՐԵԿԱՆ ԵԼՔԵՐԸ..... 65

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԻՐԱԴՐԱՅԻՆ ՄԽԵՄԱ..... 66

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ 67

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՎԱՉԱԳԱՆ ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ՈւՂԵԳԾԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԵՎ ԳԵՏԻ ԲՆՈՐՈՇ ԿԵՏԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ 68

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾՍՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 69

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՎԱՉԱԳԱՆ ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:2000 ԵՎ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ՄԿԶԲՆԱԿԵՏԵՐԻ, ՎԵՐՋԱԿԵՏԵՐԻ ՈՒ ԲԵԿՄԱՆ ԱՆԿՑՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ 70

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈւՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈւԹՅՈՒՆ..... 71

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 72

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Շինարարության ժամանակ նախատեսվող աշխատանքների ցանկ..... 20

Աղյուսակ 2. Օդի ջերմաստիճան 24

Աղյուսակ 3. Օդի հարաբերական խոնավություն..... 24

Աղյուսակ 4. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը..... 25

Աղյուսակ 5. Քամի..... 25

Աղյուսակ 6. Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը (մաս-1) 26

Աղյուսակ 7. Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը (մաս-1)..... 27

Աղյուսակ 8. Կլիմայական շրջանների ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը..... 27

Աղյուսակ 9. Ողջի գետավազանի ջրային հաշվեկշռի տարրերի միջին բազմամյա արժեքները..... 29

Աղյուսակ 10. Վաչագան գետի գետային հոսքի բնութագրիչները (համարիչ՝ ջրի ելքը (Q), մ³/վ, հայտարար՝ հոսքի ծավալը (W), մլն. մ3)..... 29

Աղյուսակ 11. 2023 թվականին Կապան քաղաքի մթնոլորտային օդում ձմռան երկօրսիդի և ազոտի երկօրսիդի միջին տարեկան կոնցենտրացիանները..... 31

Աղյուսակ 12. Կապան քաղաքի հողային ծածկույթի աղտոտվածությունը ծանր մետաղներով..... 32

Աղյուսակ 13. ՀՀ-ում աղմուկի առաելագույն թույլատրելի մակարդակը..... 39

Աղյուսակ 14. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)..... 43

Աղյուսակ 15. Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները 44

Աղյուսակ 16. Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտից վնասակար նյութերի արտանետումների քանակը..... 44

Աղյուսակ 17. Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը շինարարության ժամանակահատվածում..... 46

Աղյուսակ 18. Մթնոլորտ արտանետվող նյութերի և աղբյուրների բնութագրերը 47

Աղյուսակ 19. Շինարարության և շահագործման ժամանակ առաջացող կենցաղային և շինարարական թափոնների ցանկ 49

Աղյուսակ 20. Շինարարության ժամանակ իրականացվող մոնիթորինգի պլան..... 58

Աղյուսակ 21. Վաչագան գետի հունի մաքրման և հենապատերի վերակառուցման բացասական ազդեցությունների կանխման շրջակա միջավայրի կառավարման և մոնիթորինգի պլան..... 60

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը մշակվել է ԶԻՆՁ ՄՊԸ-ի և Կապանի համայնքապետարանի միջև կնքված պայմանագրի շրջանակներում «ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Վաչագան գետի հունի մաքրում և նոր հենապատերի կառուցման, առկա հենապատերի վերականգնման և Վաչագան գետի ավազանի /Գարեգին Նժդեհի հուշահամալիրի շրջակա հատվածից մինչև «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հարակից կամուրջ/ էսթետիկ տեսքի ձևավորման» աշխատանքային նախագծի հիման վրա: Ծրագիրը ֆինանսավորվում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից:

Նախագծի հիմնական նպատակն է բարելավել Կապան քաղաքի Վաչագան գետի հունի էկոլոգիական և սանիտարական վիճակը, կանխել հեղեղումների ռիսկը: Այս նպատակի իրականացման համար ԱՇ-ով նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝

- ✓ Գետի հունի մաքրում
- ✓ Հենապատերի հիմքերի ուժեղացում
- ✓ Հենապատերի վերականգնում, ամրացում, վերանորոգում
- ✓ Նոր հենապատերի կառուցում
- ✓ Մայթի բազրիքի վերականգնում, վերանորոգում
- ✓ Նոր ճաղավանդակների տեղադրում
- ✓ Մայթի նորոգում
- ✓ Ծառերի և արմատների հանում
- ✓ Լուսավորության համակարգի անցկացում
- ✓ Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովում
- ✓ Դեպի մասնավոր տներ մուտքի ապահովման հարթակների կառուցում
- ✓ Մելիք Ստեփանյան փողոցից դեպի Գարեգին Նժդեհի հուշահամալիր տանող հատվածում՝ ջրավազանի հարևանությամբ, առկա կամուրջի ուսումնասիրություն, և ըստ անհրաժեշտության կոսմետիկ վերանորոգման իրականացում
- ✓ Գետի աջափնյա հատվածում գոյություն ունեցող տների համար կոյուղագծի կառուցում, բացառելու համար կեղտաջրերի հոսքը դեպի գետ
- ✓ Բնահողի տեղափոխում

Կապան քաղաքի Վաչագան գետի հունի մաքրման և հենապատերի վերականգնման շինարարական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության գնահատման համար իրականացվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքներն ամփոփված են սույն հաշվետվությունում: Հաշվետվությունը պարզաբանում է նախատեսվող միջոցառումները, դրանց նպատակը, իրականացման եղանակը և ակնկալվող արդյունքները և ներառում է տվյալներ, հիմնավորումներ ու հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են նախատեսվող շինարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնելու համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ) կատարվել է հաշվի առնելով շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր վնասակար ազդեցությունները շրջակա միջավայրի, մարդկանց առողջության և սոցիալական վիճակի վրա:

ՇՄԱԳ-ի փաթեթին կից ներկայացվում է նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելման, մեղմացման կամ բացառման միջոցառումների պլան (ՇՄԿՊ):

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական ու սոցիալական ռիսկերն են՝

- ✓ օդի աղտոտում շինարարական տեխնիկայի շահագործման և հողային աշխատանքների իրականացման ընթացքում,
- ✓ քաղաքի բնակչությանը պատճառվող անհանգստություն տեխնիկայի տեղաշարժից ճանապարհների խաթարման պատճառով,
- ✓ հողային ու ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատակների իրականացման ժամանակ:

Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը մշակվել է հաշվի առնելով՝

- ✓ Ճարտարապետահատակագծային առաջադրանքը,
- ✓ Կառուցապատվող տարածքի վերաբերյալ հավաքված տվյալները,
- ✓ Տարածաշրջանի վերաբերյալ ելակետային տվյալներն ու քարտեզները,
- ✓ Վարագան գետի հունի մաքրման վերաբերյալ շահագրգիռ կողմերի ու հանրության հետ հանդիպումները, ինչպես նաև առաջին հանրային լսման արդյունքները:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2025թ. երկրորդ եռամսյակում: Շինարարության տևողությունը 12 ամիս:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Օգտագործվող հասպտակումներ

ԱՆ	Աշխատանքային նախագիծ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄԿՊ	Շրջակա միջավայրի կառավարման պլան
ՀՀ	Հայաստանի հանրապետություն
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԹԿ	սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՇՄՆԶ	Շրջակա միջավայրի նախնական գննություն
ԲԸՏՄ	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
ԱԱՏՄ	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿՆ	Տարածքային կառավարման նախարարություն
ՑՕՄ	Ցնդող օրգանական միացություններ

2.2. Օգտագործվող սահմանումներ և տերմիններ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության եւ մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երեւոյթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև,

շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները. նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական եւ տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում,

ձեռնարկող՝ սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ. ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք,

շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրության փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք,

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին,

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրության փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ,

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ,

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ,

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը,

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության,

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ,

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով. հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական

հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին, բերելու) միջոցառումներ.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը,

շրջակա միջավայրի կառավարման պլան՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները (շինարարության, շահագործման, փակման, հետփակման փուլերը, ռիսկային և արտակարգ իրավիճակները), դրանց ընտրության և արդյունավետության հիմնավորումը իրականացման ժամանակացույցը, մշտադիտարկման ցուցիչները, ծախսերի գումարային գնահատումը նախատեսող փաստաթուղթ,

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ,

պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից,

կեղտաջրեր՝ ջրային ռեսուրս թափվող աղտոտված ջրեր:

2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրությունը և միջազգային պարտավորությունները

2.3.1 ՀՀ Օրենսդրություն

Շրջակա միջավայրի պահպանությունն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 12-րդ՝ «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» հոդվածով, որտեղ նշվում է.

1. Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Շրջակա միջավայրի պահպանությունն ամրագրված է նաև ՀՀ օրենսդրությամբ:

ՀՀ Օրենքը Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության և Փորձաքննության մասին

Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Փորձաքննության մասին օրենքն ընդունվել է 2014թ. հունիսի 21-ին: Օրենքում էական փոփոխություններ են կատարվել և այդ փոփոխություններն ընդունվել են 2023թ. մայիսի 3-ին: Մույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, պետական փորձաքննության եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

Օրենքը սահմանում է գնահատման և փորձաքննության հիմնադրույթներն ու սկզբունքները, ինչպես նաև նպատակն ու խնդիրները: Ըստ օրենսդրության Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Ըստ օրենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ու փորձաքննության են ենթակա հասարակական-տնտեսական կյանքի ավելի քան 15 ոլորտներում առկա 45 գործունեության տեսակներ՝ այդ թվում ջրատնտեսական կառույցների՝ ջրամբարների և պատվարների, ամբարտակների, խոշոր ջրանցքների, մղիչ կայանների և այլ ջրատնտեսական կառույցների կառուցումն ու շահագործումը, ստորերկրյա ջրերի արդյունահանման հետ կապված իրականացվող ցանկացած գործողությունները, կեղտաջրերի մաքրման կայանների վերակառուցման և կառուցման աշխատանքները:

Քաղաքային ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման ծրագրերում գնահատվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը, դրանց կառուցման, շահագործման, լուծարման ընթացքում և լուծարումից հետո, ինչպես նաև արտակարգ իրավիճակների առաջացման պայմաններում:

ՀՀ օրենք հանրային առողջության մասին

Մույն օրենքն ընդունվել է 2024 թվականի փետրվարի 28-ին:

Օրենքի նպատակն է հանրության (մարդու) առողջության պահպանման և ապահովման, առողջության պաշտպանության և խթանման, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների (այսուհետ՝ հիվանդություններ) կանխարգելման, հանրության (մարդու) առողջության վրա շրջակա միջավայրի սոցիալ-տնտեսական, վարքագծային և հնարավոր այլ վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության կանխարգելման, ներկա ու ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ստեղծման, հանրության (մարդու) առողջության ապահովման մատչելի ու հավաստի տեղեկատվության, առողջության խթանման, հանրային առողջապահական գիտելիքների տարածման և ուսուցման, հանրության (մարդու) առողջությանն ուղղակի կամ անուղղակի վնաս պատճառելը կանխարգելելու նպատակով:

Օրենքով կարգավորվում են կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման և իրականացման, հիվանդությունների իմունականխարգելման, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության կանխարգելման (շրջակա միջավայրի հիգիենայի), համաճարակաբանական դիտարկման, արտադրական հսկողության, հանրային իրազեկման, բժշկական ու հանրային առողջապահական գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության, հանրային առողջապահական գիտելիքների ուսուցման, Հայաստանի Հանրապետությունում սանիտարահամաճարակային հսկողության և պետական գրանցման ենթակա արտադրանքի (ապրանքների) գրանցման (բացառությամբ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով կարգավորվողի), աշխատանքի հիգիենայի ծառայությունների և հանրային առողջապահական փորձաքննության հետ կապված հասարակական հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են հանրային առողջապահության բնագավառում Կառավարության, պետական կառավարման համակարգի մարմինների լիազորությունները, ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի իրավունքներն ու պարտականությունները, արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում բնակչության պաշտպանության առանձնահատկությունները, առողջության պահպանման իրավունքի իրականացման մեխանիզմներն ու կարգը:

ՀՀ այլ օրենքներ

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման ուղղությամբ կատարվող աշխատանքների շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունը կանոնակարգվում է նաև ՀՀ Ջրային օրենսգրքով, ՀՀ Հողային օրենսգրքով, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով, բնապահպանական այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև ՀՀ Աշխատայրային օրենսգրքով:

Ջրամատակարարման և ջրօգտագործման բնագավառում բնակչության առողջության անվտանգության պահանջները սահմանված են հետևյալ իրավական ակտերով.

Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ № 2-III-Ա2-2 սանիտարական կանոններ և նորմեր /գրանցված է 28.12.2002թ./, որը սահմանում է խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիների կազմակերպմանը և շահագործմանը ներկայացվող սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջները:

Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող պահանջներ: Որակի հսկողություն № 2-III-Ա2-1 սանիտարական կանոններ և նորմեր/գրանցված է 28.12.2002թ./, որով սահմանվում են խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները, ինչպես նաև արտադրվող ու բնակավայրերին ջրամատակարարման համակարգերով տրվող խմելու ջրի որակի հսկողության կանոնները:

ՀՀ Օրենք Կենդանական աշխարհի մասին (ՀՕ-52, 03.04.2000)

ՀՀ Օրենք Բուսական աշխարհի մասին (ՀՕ-22, 23.11.1999)

ՀՀ Օրենք Թափոնների մասին (ՀՕ-159-Ն, 24.11.2004)

ՀՀ կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության N71-Ն որոշում (29.01.2010)

ՀՀ բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության N72-Ն որոշում (29.01.2010)

ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության N781-Ն որոշում (14.08.2014)

ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության N967-Ն որոշում (14.08.2008)

«ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» թիվ 1059-Ս որոշումը (25.09.2014)

ՀՀ կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության N71-Ն որոշում (29.01.2010)

ՀՀ բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության N72-Ն որոշում (29.01.2010)

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ ստեղծելու, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու, ինչպես նաև «Խուստուփ» պետական արգելավայր ստեղծելու, «Խուստուփ» պետական արգելավայրի կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին թիվ N 1465-Ն որոշումը (19.12.2013):

2.3.2 Կոնվենցիաներ և միջազգային պայմանագրեր

Անդրսահմանային Համատեքստով Շրջակա միջավայրի վրա Ազդեցության Գնահատման Մասին Կոնվենցիա /Espo, 1991թ./

Կոնվենցիայի համաձայն կողմերը պարտավորվում են ամեն կերպ մեղմացնել եթե ոչ կանխել անդրսահմանային վնասակար գործունեությունը:

Ըստ Կոնվենցիայի պահանջի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փաստաթուղթը պետք է ներառի տվյալ գործնության նկարագիրը, դրա նպատակները, այլընտրանքային տարբերակները, ներառյալ տվյալ գործողությունից հրաժարվելու տարբերակը, գործողության բացասական ազդեցությանը ենթակա շրջակա միջավայրի օբյեկտները, կանխարգելիչ միջոցառումների ցանկ և այլ:

Անդրսահմանային Համատեքստով Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի մասին Կոնվենցիայի Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին Արձանագրություն (Կիև, 2003թ)

Արձանագրությունը նահատեսում է ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) անցկացում և կողմերի պարտավորություն այս գործընթացի հանդեպ ազգային և տարածաշրջանային մակարդակներով: Ըստ տվյալ արձանագրության ՌԷԳ-ի ենթակա

են տարբեր ոլորտների զարգացման համար մշակվող ծրագրերն ու նախագծերը, իսկ հնարավորության դեպքում նաև քաղաքականությունն ու օրենսդրությունը:

Միջազգային լճերի և միջսահմանային ջրահոսքերի պահպանության և օգտագործման մասին 1992թ. կոնվենցիային կից Ջուր և Առողջություն Արձանագրություն (1999թ.)

Արձանագրության նպատակներն են ապահովել մարդուն առողջության համար վտանգ չսպառնացող որակի ջրով, ապահովել խմելու ջրի մատչելիությունը բոլորի համար, իրականացնել սանիտարական խարգելիչ և էկոհամակարգերի պահպանումն ապահովող միջոցառումներ:

Օրհուսի Կոնվենցիա (1998 թ.)

Այս կոնվենցիան ապահովում է բնապահպանական տեղեկատվության մատչելիությունը հասարակությանը, հասարակության մասնակցությունը որոշումներ ընդունելու գործընթացում և հասարակության համար արդարադատության մատչելիությունը բնապահպանության ոլորտում:

Խմելու ջրի և ջրամատակարարման ոլորտում ցանկացած տեղեկություն պետք է մատչելի լինի հասարակության համար:

3. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1 Ձեռնարկողի մասին տեղեկատվություն

ՋԻՆՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մասնավոր ինժեներա-խորհրդատվական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1990թ.:

Ընկերությունը ներգրավված է ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջրային ռեսուրսների պահպանության, ինչպես նաև կոշտ թափոնների կառավարման բնագավառներում:

ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի, «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի և ՋԻՆՁ ՄՊԸ-ի միջև կնքված Պայմանագիր 14 շրջանակներում մշակվել է աշխատանքային նախագիծ, որի նպատակն է գետի հունի մաքրումը, հենապատերի հիմքերի ուժեղացումը, հենապատերի վերականգնումը, ամրացումը, վերանորոգումը, նոր հենապատերի կառուցումը, մայթի բազրիքի վերականգնումը, վերանորոգումը, նոր ճաղավանդակների տեղադրումը, մայթի նորոգումը, ծառերի և արմատների հանումը, լուսավորության համակարգի անցկացումը, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովումը, դեպի մասնավոր տներ մուտքի ապահովման հարթակների կառուցումը, առկա կամուրջի ուսումնասիրությունը և ըստ անհրաժեշտության կոսմետիկ վերանորոգման իրականացումը, գետի աջափնյա հատվածում գոյություն ունեցող տների համար կոյուղագծերի կառուցումը՝ բացառելով կեղտաջրերի հոսքը դեպի գետ, բնահողի տեղափոխումը:

Ընկերության իրավաբանական և գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Քանաքեռի 11-րդ փող., տ. 57:

3.2. Վաչագան գետի հունի մաքրման և հենապատերի ամրացման նախագծային առաջարկություններ

Նախագծի իրականացման տարածքը

Կապան քաղաքի տարածքում Վաչագան գետի հունի մաքրման ու հենապատերի հիմքերի ուժեղացման, վերականգնման և վերանորոգման աշխատանքների ընթացքում նախատեսվում է գետի հունից ծառերի ու արմատների, բուսականության հանման, մայթերի բազրիքների վերականգնման, հների քանդման, կամուրջների ձևափոխման, հունի մեջ գտնվող խողովակաշարերի ապամոնտաժման, ստորգետնյա եղանակով գազատար խողովակի մոնտաժման, լուսավորության համակարգի անցկացման, բնահողի տեղափոխման աշխատանքներ:

Վաչագան գետի հունի ակնադիտական աղտոտումը մարդկային գործունեության արդյունքում առաջացող կոշտ թափոններն են (ապակյա և պլաստիկ շշեր, պոլիէթիլենային տոպրակներ, մետաղի ջարդոն և այլն), ինչպես նաև վարարումների ժամանակ քարերի ու ավազի բերուկները: Դրանից զատ գետի հունը ծածկված է բուսականությամբ՝ ծառեր թփեր, միամյա ու բազմամյա բույսեր: Այս ամենը ոչ միայն բերում է գետի ջրի որակի վատացման, այլև արգելակում է գետի բնական հոսքը՝ վարարումների ժամանակ մեծացնելով հեղեղումների ռիսկը:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Կապան քաղաքի Վաչագան գետի Գարեգին Նժդեհի հուշահամալիրի շրջակա հատվածից մինչև «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հարակից կամուրջ ընկած հատված: Այս հատվածում գետի աջ ափի ամբողջ երկարությամբ առկա է հենապատ, որը գրեթե ամբողջությամբ քայքայված է, իսկ որոշ հատվածներում հիմքերը լվացված են:

Գետի ձախ ափում ընդհանուր 298մ երկարությամբ կառուցված է նոր հենապատ: Ձախ ափի որոշ տեղամասերում բնակիչները սեփական միջոցներով կառուցել են հենապատեր, ինչի արդյունքում խախտվել է գետի բնական հունը, հանգեցնելով վերջինիս նեղացման մինչև 5.0- 6.0մ:



Նկար 1-3. Վաչագան գետի հունի ներկա վիճակը

Գետի աջ ափի ամբողջ երկարությամբ առկա է մայթ, որը որոշ հատվածներում քայքայված է, իսկ մայթի եզրագծով գոյություն ունեցող պաշտպանիչ պատը հիմնականում բացակայում է: Այն տեղամասերում որտեղ պաշտպանիչ պատը առկա է, ամբողջությամբ գտնվում է քայքայված վիճակում:

Գետի աջափնյա հատվածի մասնավոր տների կոյուղաջրերը բնակիչների կողմից կառուցված թողարկ խողովակների միջոցով ամբողջությամբ լցվում են գետի մեջ: Որոշ տեղերում գետի վրայով առկա են կոյուղու խողովակների թռիչքային հատվածներ, որոնցով ձախափնյա ավելի բարձրադիր նիշերից հավաքված կեղտաջրերը տեղափոխվում են Մելիք Ստեփանյան փողոցում գործող ջրահեռացման ցանց, սակայն դրանցից որոշները գետի թռիչքային հատվածում վնասվածքների պատճառով նույնպես թափվում են գետի մեջ:

Գետի աջափնյա հատվածի մասնավոր տների կոյուղաջրերը բնակիչների կողմից կառուցված թողարկ խողովակների միջոցով ամբողջությամբ լցվում են գետի մեջ: Որոշ տեղերում գետի վրայով առկա են կոյուղու խողովակների թռիչքային հատվածներ, որոնցով ձախափնյա ավելի բարձրադիր նիշերից հավաքված կեղտաջրերը տեղափոխվում են Մելիք Ստեփանյան փողոցում գործող ջրահեռացման ցանց, սակայն դրանցից որոշները գետի թռիչքային հատվածում վնասվածքների պատճառով նույնպես թափվում են գետի մեջ:

3.3. Նախագծային առաջարկներ

Գետի հունի մաքրում

ԱՆ-ով նախատեսվում է գետի հունի մաքրում ծառերից, թփերից և բերվածքներից: Գոյություն ունեցող ծառերը և թփերը (ընդհանուր 32 հատ) ամբողջությամբ արմատային համակարգով հեռացնել: Հանված ծառերի բները և հաստ ճյուղերը նախատեսվում է հանձնել համայնքապետարանին որպես վառելափայտ, իսկ բարակ ճյուղերը հեռացնել աղբավայր:

Մաքրման աշխատանքները կատարվելու են էքսկավատորով ու բուլդոզերով, որոնք հունի մեջ կիջեցվեն վերամբարձ կռունկի օգնությամբ: Գետից հանված թափոնները կտեղադրվեն արկղի մեջ, որը վերամբարձ կռունկով կդատարկվի ինքնաթափերի մեջ: Հանված թափոնները ինքնաթափերով կտեղափոխվեն համայնքապետարանի կողմից հատկացված վայր, որը գտնվում է մաքրվող տարածքից մոտ 16կմ հեռավորության վրա: Գետից հանված ու շինարարական թափոնների տեղադրման համար Կապալառուն պայմանագիր կկնքի Կապանի քաղաքապետարանի հետ:

Նախագծով նախատեսվում է գետի ձախ ափում վերանորոգել մոտ 62մ գոյություն ունեցող հենապատ և կառուցել 408մ նոր հենապատ: Նոր հենապատը նախատեսվում է կառուցել Գարեգին Նժդեհի հուշահամալիրին հարակից կամրջից գետի հունով 188,5մ ներքև հատվածից մինչև Բժշկական կենտրոնի հարակից կամուրջ ընկած հատվածում:

Նոր հենապատերի ուղեգծերի ընտրության համար հիմք է ընդունվել պատվիրատուի գրությամբ առաջարկվող հետևյալ մոտեցումները (տես ընդհանուր դրույթներ).

1. Նոր կառուցվող հենապատի ուղեգծի ընտրությունը իրականացնել այնպես, որ հնարավորինս վերականգնվի գետի բնական հունը:
2. N8 նոր կառուցվող հարթակից մինչև գոյություն ունեցող պահպանվող հարթակ, նոր կառուցվող հենապատի ուղեգծի ընտրությունը իրականացնել այնպես, որ աջափնյա գոյություն ունեցող վերանորոգվող և ձախափնյա նոր կառուցվող հենապատերի վերին շուրթերի միջև ապահովվի 8.5մ լայնություն:
3. N4 հետիոտնային անցումից մինչև N6 հարթակ ընկած հատվածում ձախափնյա նոր կառուցվող հենապատի ուղեգծի ընտրությունը իրականացնել այնպես, որպեսզի հյուրանոցային համալիրի հատվածում, հյուրանոցի արտաքին պատից մինչև հենապատի ներքին եզրագիծ ապահովվի 2.5մ հեռավորություն:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է բացառապես գետի հունի տարածքում և չի առնչվում բնակիչների սեփականություն հանդիսացող հողամասերի հետ: Նոր կառուցվող հենապատերի սկզբնակետերի, վերջնակետերի և բեկման անկյունների աշխարհագրական կոորդինատները բերված են Հավելված 4:

Մելիք Ստեփանյան փողոցից դեպի Գարեգին Նժդեհի հուշահամալիր տանող հատվածում առկա կամրջից վերև գոյություն ունեցող պատվարից սկսած մինչև «Կապանի

բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հարակից կամուրջ ընկած հատվածում նախատեսվում է գետի աջափնյա գոյություն ունեցող մոտ 660մ հենապատի վերանորոգում:

Գետի հաշվարկային ելքերը հաշվարկվել է հիմք ընդունելով գետի բնական հունի վերականգնման և լայնության վերաբերյալ համայնքապետարանի առաջարկությունները, ինչպես նաև ՀՀ ՇՄՆ Հիդրոէներգետիկայի և մոնիտորինգի կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված Վաչագան գետի առավելագույն ելքերը, որոշ ընդհատումներով՝ 1965թ. մինչև 1994թ. և 2004թ. -ից մինչև 2020թ. (Հավելված 1): Ներկայացված առավելագույն ելքերի հիման վրա հաշվարկվել և կառուցվել է փաստացի և տեսական ապահովվածության կորերը: Հաշվի առնելով նախագծվող կառույցի վտանգավորության աստիճանը, հետագա հաշվարկներում հիմք է ընդունվել 1000 տարին մեկ կրկնողականության ելքը՝ $Q = 22.7 \text{ մ}^3/\text{վ}$:

Գետի լայնության առաջարկվող չափերը և հունի փաստացի թեքությունները հաշվի առնելով կատարվել են հիդրավիլի հաշվարկներ, ինչի արդյունքում հաստատվել է, որ վերը նշված մոտեցումներով գետի հունի վերականգնման և հենապատերի կառուցման դեպքում հաշվարկային առավելագույն $22.7 \text{ մ}^3/\text{վ}$ ելքը կարող է անխոչընդոտ անցնել գետի տվյալ հատվածներով:

Գետի հունի մաքրման, գոյություն ունեցող մետաղական հարթակների ապամոնտաժման և նորերի տեղադրման աշխատանքները նախատեսվում է իրականացնել փուլերով, շինհրապարակը բաժանելով մի քանի տեղամասերի, ինչը հնարավորություն կտա ապահովելու մարդկանց անվտանգ տեղաշարժը շինարարության ընթացքում:

Նոր հենապատերի կառուցման կամ հների հիմքերի վերակառուցման ժամանակ նախատեսվում է տվյալ հատվածում գետի հոսքի ժամանակավոր տեղափոխում մի կեսից մյուսը: Գետում հոսքի տեղափոխման համար նախատեսվում է օգտագործել հունի մաքրումից առաջացած գրունտային զանգվածը, անհրաժեշտության դեպքում օգտագործել պոլիէթիլենային թաղանթներ և խրամուղիներից պոմպերի միջոցով ջրահեռացման կազմակերպում:

Ենթակառուցվածքներ

Նախագծի իրականացման տարածքում առկա են նաև մի շարք ենթակառուցվածներ՝ ջրագծեր, գազատարներ, կոյուղագծեր, կամուրջներ, որոնք նույնպես ենթակա են ապամոնտաժման կամ տեղափոխման:

Նախագծով նախատեսվում է ապամոնտաժել և հունից դուրս տեղափոխել Գարեգին Նժդեհի հուշահամալիր տանող կամրջի հատվածում ձախափնյա հենապատի վրա առկա է 100մ տրամագծի *մետաղական ջրագիծը* (տես գծագրական մաս):

Համայնքապետարանի կողմից իրականացվող մեկ այլ ծրագրով նախատեսվում է աջափնյա հենապատի վրայով գրեթե ամբողջ երկարությամբ առկա *գազատար*

խողովակաշարն ամբողջությամբ ապամոնտաժել և ստորգետնյա տեղադրմամբ կառուցել մայթով:

Նախագծով նախատեսվում է ապամոնտաժել գետի վրա բնակիչների կողմից կառուցված թվով 19 հատ *մետաղական անցում-հարթակները*, բացառությամբ ՆԿ 5+83.2-ում գոյություն ունեցող հարթակը, որը գտնվում է բավականին նորմալ վիճակում:

Ապամոնտաժվող հարթակների փոխարեն նախագծով նախատեսվել է 5.0 լայնությամբ 13 հատ, 3.0մ լայնությամբ 1 հատ և 1.2մ լայնությամբ 1 հատ միանման անցում հարթակների կառուցում:

Նախագծով գետի աջափնյա հատվածում՝ Մելիք Ստեփանյան փողոցից դեպի Գարեգին Նժդեհի հուշահամալիր տանող կամրջից մինչև «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հարակից կամուրջ, նախատեսվում է գոյություն ունեցող *մայթի վերակառուցում և նոր բազրիքների ու ճաղավանդակների տեղադրում*: Պատվիրատուի առաջարկությամբ, մայթի լայնությունը ամբողջ երկարությամբ նախատեսվել է 2.6մ: Վերակառուցվող մայթի ամբողջ երկարությամբ, միմյանցից 4մ հեռավորության վրա նախատեսվել է ծառերի բներ 0.8x0.8մ չափերով՝ հետագայում ծառատնկում իրականացնելու համար:

Ըստ համայնքապետարանի հետ ձեռք բերված համաձայնության, նոր նախատեսված բներում ծառատնկն իրականացվելու է համայնքապետարանի կողմից այլ ծրագրով, հետևաբար սույն ԱՆ-ում ծառատնկի համար ծավալներ նախատեսված չէ:

Վերակառուցվող մայթի ամբողջ երկարությամբ նախատեսվում է նոր *արտաքին լուսավորության համակարգի* կառուցում: Յուրաքանչյուր հենասյան վրա նախատեսվում է տեղադրել երկու լուսատու, մեկը ուղված դեպի մայթ, մյուսը դեպի փողոց: Լուսավորության ցանցի սնուցումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող վահանակից, որտեղ առկա է նաև էլ. հաշվիչը: Հետևաբար սույն ԱՆ-ի ծավալներում էլ. Հաշվիչ նախատեսված չէ, ինչը համաձայնեցվել է նաև քաղաքապետարանի կոմունալ վարչության համապատասխան մասնագետի հետ:

Կոյուղու կոլեկտորներ

Ձախափնյա հատվածի մասնավոր տների կոյուղաջրերը Մելիք Ստեփանյան փողոցով անցնող ջրահեռացման ցանց տեղափոխելու նպատակով, ԱՆ-ով նախատեսվում է ընդհանուր մոտ 0.8 կմ ջրահեռացման կոլեկտորների կառուցում:

Նախագծվող ջրահեռացման ցանցը բաղկացած է առանձին 7 հատվածներից, ինչպես նաև 4 առանձին թողարկ խողովակներից (տես գլխավոր հատակագիծ): Նախագծվող կոյուղու կոլեկտորների 4 տեղամասերում (Կ1-ից Կ4) գետի անցումներն իրականացվելու են թռիչքային եղանակով, պատյան խողովակների միջով, ջերմամեկուսացմամբ: Բոլոր 4 թռիչքները նախատեսվում է իրականացնել նոր կառուցվող հարթակների անմիջապես տակով:

Երկու տեղամասերում (Կ5 և Կ7) հաշվի առնելով նոր կառուցվող կոլեկտորների ուղեգծերի ռելիեֆը, որը նիշերով բավականին ցածր է Մելիք Ստեփանյան փողոցից, գետի

անցումները իրականացվելու է գետի հունով: Այստեղ նույնպես անցումները նախատեսվում է իրականացնել պատյան խողովակներով, ջերմամեկուսացմամբ: Պատյան խողովակը հեղեղումներից պաշտպանելու նպատակով, խողովակը գետի հունի հատվածում նախատեսվում է տեղադրել սեղանաձև կտրվածքի բետոնի մեջ:

Կոլեկտորի այս հատվածների նախագծային նիշերը բավականին ցածր են ստացվում Մելիք Ստեփանյան փողոցով անցնող կոլեկտորի տվյալ հատվածի փաստացի նիշերից: Հետևաբար, նախագծով նախատեսվել է նաև վերակառուցել Մելիք Ստեփանյան փողոցով անցնող գոյություն ունեցող կոլեկտորը Կ5 կոլեկտորի միացման կետից սկսած մինչև «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մուտքի մոտ, որը նախագծում նշված է որպես Կ6 կոլեկտոր, տեղադրելով այն ավելի խորը նիշերի վրա:

Ձախափնյա հատվածի փաստացի կառուցապատումը և ռելիեֆային կտրտվածությունը հաշվի առնելով, թվով 3 թողարկներ հնարավոր չի եղել միացնել նախագծվող կոլեկտորներից որևէ մեկին, ինչի պատճառով վերջիններիս համար նախագծով նախատեսվել են առանձին թռիչքների իրականացում գետի վրայով:

Գետի բնական հունի վերականգնման, ինչպես նաև նոր կառուցվող հենապատի որոշ հատվածներում համայնքապետարանի կողմից առաջարկվող գետի հունի 8.5մ լայնության ապահովման արդյունքում, կառուցվող հենապատի որոշ հատվածներ հայտնվել է գետի փաստացի հունի մեջ: Ձախափնյա կոլեկտորները նախագծով նախատեսվում է կառուցել հենապատից 1.5-2.0մ հեռավորության վրա, ինչի արդյունքում Կ5 և Կ7 կոլեկտորների որոշ հատվածների ուղեգծեր անցնում են գետի ներկայիս հունով, որտեղ հենապատերի կառուցումից հետո նախատեսվում է լիցքի իրականացում հողամասերի ռելիեֆների նիշերին համապատասխան: Հետևաբար նշված հատվածներում կոյուղու կոլեկտորների ուղեգծով և դիտահորերի հատվածներում նստվածքներից խուսափելու համար, նախագծով նախատեսվում է դիտահորերի տակ մինչև մայր գրունտ իրականացնել խամքարաբետոնե հենարաններ, իսկ կոլեկտորի տակ նախատեսվում է ավազակոպճային գրունտով լիցքի իրականացում:

Վերոնշյալ բոլոր աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել գետում նվազագույն ելքի ժամանակահատվածում, նախապես համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

3.4. Այլընտրանքային տարբերակները

Վաչագան գետի հունի մաքրման ու հենապատերի հիմքերի ուժեղացման, վերականգնման և վերանորոգման աշխատանքների նախագծման ժամանակ քննարկվել են մի քանի այլընտրանքային տարբերակներ:

1. Գետի հունի մաքրում բերուկներից, ծառերից ու թփերից և հունի բետոնապատում, ձկնաթող հատվածների մասնակցությամբ: Այս տարբերակն առաջարկվել է համայնքապետարանի կողմից, սակայն մերժվել է նախագծողի կողմից՝ գետի բնական էկոհամակարգի խախտման պատճառով:

2. Գետի հունի մաքրում բերուկներից ու բուսականությունից, պահպանելով գետի հունի բնական վիճակը, գետի էկոլոգիական հավասարակշռությունը և ջրային կենսաբազմազանությունը:

3. Զրոյական տարբերակ՝ գետի հունի մաքրում չի իրականացվում: Այս դեպքում գետի աղտոտվածությունն ավելանում է, քաղաքում ստեղծվում է հակասանիտարական վիճակ, գետի հունի բուսականությունը խոչընդոտում է ջրի ազատ հոսքը, և առաջանում են ջրի կանգուն տեղեր, որտեղ ստեղծվում են բարենպաստ պայմաններ մոծակների և այլ վնասակար միջատների թրթուրների զարգացման համար՝ ստեղծելով առողջապահական ռիսկեր:

Գետի հունում առկա բուսականությունը և բերուկները ստեղծում են հեղեղումների մեծ ռիսկեր գարնանային վարարումների ժամանակ:

Քննարկումների արդյունքում ընտրվել է 2-րդ տարբերակը, հաշվի առնելով նաև համայնքի բնակիչների ցանկությունները:

4. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՈՒՆ

4.1 Նախապատրաստական աշխատանքներ

Մինչ շինարարական աշխատանքների իրականացումը անհրաժեշտ է՝

- ✓ ստանալ անհրաժեշտ թույլտվությունները, այդ թվում նաև շինարարական թափոնների տեղադրման համար թույլտվությունը,
- ✓ կազմակերպել շինհրապարակը,
- ✓ կազմել առանձին աշխատանքների իրականացման ժամանակացույց,
- ✓ կազմակերպել տեխնիկայի անվտանգության կանոնների ուսուցում, ըստ ՀՀՇՆ III-IV.2008-ի:

Շինհրապարակի կազմակերպումն իր հերթին ներառում է՝

- ✓ շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտն գլխածածկույթով,
- ✓ շինարարական նյութերի ու բետոնի ընդունման հարթակի պատրաստում,
- ✓ շինհրապարակի գիշերային լուսավորում:

4.2 Շինարարական աշխատանքներ

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

Աղյուսակ 1. Շինարարության ժամանակ նախատեսվող աշխատանքների ցանկ

№	Նախատեսվող աշխատանքների անվանումը	Օգտագործվող նյութերը (շին. նյութեր)	Աշխատանքի ծավալը	Ծանոթ.
1	Հողային աշխատանքներ Գետի հունի մաքրման, հենապատերի հիմքերի և փոտրակների մշակում, խրամուղիների մշակում Ետլիցքի և բարեկարգման աշխատանքներ Ոչ պիտանի գրունտի բարձում-տեղափոխում համայնքապետարանի կողմից նախանշված վայրը	Մեխանիզմ և ձեռքի աշխատանք	10660.0մ ³ , այդ թվում	
			8913.0 մ ³	
			1747.0 մ ³	
			Ասֆալտապատում	667.6մ ²
	Ոչ պիտանի նյութերի բարձում-տեղափոխում համայնքապետարանի կողմից նախանշված վայրը		160.0 մ ³	
2	Հենապատերի և անցում հարթակների իրականացում	Երկաթբետոն/բետոն	2827.3 մ ³	
3	Ե/բ ջրհավաք առվակների իրականացում	Երկաթբետոն/բետոն	6.1 մ ³	
4	Մեկուսացման աշխատանքներ	բիտում	2883.4 մ ²	
5	Ներկման աշխատանքներ Մետաղական կոնստրուկցիաներ և բազրիքներ	Հակակոռոզիոն ներկ	1650.7 մ ²	

№	Նախատեսվող աշխատանքների անվանումը	Օգտագործվող նյութերը (շին. նյութեր)	Աշխատանքի ծավալը	Ծանոթ.
6	Ե/բ հորերի կառուցում	Դիտահորեր, ստուգիչ հորեր, փականային հորեր	60 հատ	
7	Արտաքին լուսավորության աշխատանքներ		համալիր	
8	Մայթերի իրականացում, բետոնե և բազալտե սալիկներով		1658.0մ ²	

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

5.1. Նախաձեռնության գտնվելու վայրը և տեղանքը


Կապան քաղաքը Սյունիքի մարզի մարզկենտրոնն է, գտնվում է Երևանից մոտ 300 կմ հարավ-արևելք: Քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 705-1050մ (միջինը 910մ) բարձրությունների վրա: Այն հյուսիսից շրջափակված է Բարգուշատի, արևմուտքից՝ Մեղրու և կենտրոնական մասից Խուստուփ-Կատարի լեռներով, որոնք հանդիսանում են Ջանգեզուրի լեռնաշղթայի ճյուղավորումները: Այս լեռնագագաթներից սկիզբ են առնում բազմաթիվ առուներ՝ առաջացնելով գետակներ ու գետեր: Քաղաքի տարածքում Ողջի գետը ընդունում է Վաչագան և Կավարտ վտակները:

Լեռների հյուսիսային և արևելյան լանջերը պատված են անտառներով:

Գեոմորֆոլոգիական տեսակետից քաղաքի ռելիեֆը խիստ կտրտված է՝ ջրբաժանների ու գետահովիտների բացարձակ մեծությունների մեծ տատանումներով: Գետի ակունքներում հայտնաբերվել են պլեստոցենյան սառցապատումների հետքեր, որոնց մի մասը լցվել է ջրով:

Ռելիեֆին բնորոշ են գոգածալքային հիմքի վրա ձևավորված անհամաչափ լանջերով ծալքաբեկորավոր, էրոզային, տեղատարումային, երբեմն «շրջված» ձևերը: Արևելյան լանջերը՝ կտրտված բազմաթիվ վտակների հովիտներով, աստիճանաձև իջնում են դեպի գետերի հովիտները: Ջանգեզուրի լեռնաշղթայի հարավային մասում ծալքավորված էրոզենի նստվածքահրաբխային շերտախմբի և խոշոր ներժայթուկ զանգվածի վրա ձևավորվել է ծալքաբեկորավոր, էրոզային տեղատարումային ռելիեֆ: Հարավային լանջերը զառիթափ են, ժայռոտ և մասնատված: Լեռների գագաթային մասերում հին սառցադաշտային ձևերի հետ միաժամանակ մեծ չափերի են հասնում սառնամանիքային հողմահարումը և էրոզային երևույթները:

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ստորին-միջին յուրայի, վերին յուրայի, վերին յուրա-կավճի, ստորին կավճի տարակազմ մստվածքային, հրաբխա-նստվածքային, հրաբխային առաջացումները: Գետահովիտների ցածրադիր մասերում առկա են ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ նստվածքները, լայնորեն տարածված են նաև տարակազմ և բազմազան դայկային ու երակային ապարները:



Նկար 4. Սյունիքի մարզի քարտեզը

5.2. Բնակլիմայական պայմաններ

Կապան քաղաքը գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտու հյուսիսում՝ մերձարևադարձային և բարեխառն կլիմայական գոտիների սահմանագլխում, ինչի շնորհիվ այստեղ շատ հստակ արտահայտված են տարվա եղանակների հերթափոխությունը: Քաղաքում ամռանը ակտիվանում են հարավից թափանցող արևադարձային տաք և չոր օդային զանգվածները, իսկ ձմռանը հյուսիսից եկող ցուրտ օդը: Զգալի է նաև Կասպից ծովի ազդեցությունը: Տեղանքը անհարթ է, բարձրությունների տատանումները գերազանցում են 300մ-ը: Հաճախ երբ բնակավայրի բարձրադիր մասերում ձմռանը ձյուն է տեղում, ապա ցածրադիր հատվածներում՝ անձրև: Հարակից լեռնալանջերի թեքությունները, որոնք հասնում են 30-40 աստիճանների, բուսածածկի հետ միասին ևս կլիմայաստեղծ ակտիվ գործոններ են:

Կապանում տարեկան միջին բազմամյա ջերմաստիճանը 12,2°C է: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ -22.1°C, իսկ բացարձակ առավելագույնը հուլիսին՝ +42°C: Տարեկան բացարձակ ջերմաստիճանի լայնույթը 64°C:

Ուժգին քամիներ հազվադեպ են լինում: 15 մ/վրկ. և ավելի ուժգնությամբ քամիներ տարվա կտրվածքով կարող են դիտվել ընդամենը 2-3 օր: Տիրապետող են հարավարևելյան և արևելյան ուղղության քամիները՝ 1-3 մ/վրկ միջին արագությամբ:

Համաձայն ՀՀՇՆ «Շինարարական կլիմայաբանության» ուսումնասիրվող տարածքում սառեցման խորությունը կազմում է 0,2մ:

Տարածքի կլիմայական պայմանների մասին առավել ամբողջական տեղեկատվություն կազմելու համար ստորև բերված են Կապան քաղաքի կլիմայական տարրերը՝ ըստ ՀՀՇՆ 22-01-24 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերի:

Աղյուսակ 2. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան °C	Բացարձակ նվազագույն °C	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Կապան	910	0.8	2.4	5.9	11.5	16.3	20.6	23.7	23.1	18,9	13.1	7.3	2.6	12.2	-22.1	42.4

Աղյուսակ 3. Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %													Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	ըստ ամիսների												Ամենացուրտ ամսվա %		Ամենաշոգ ամսվա, %	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				
Կապան	75	75	75	73	74	67	62	63	72	78	78	77	73	53	44	

Աղյուսակ 4. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օրերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական օրական առավելագույն}}{\text{մմ}}$												Ձնածածկույթ			
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակ	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Կապան	<u>27</u> 30	<u>32</u> 40	<u>63</u> 58	<u>72</u> 76	<u>98</u> 99	<u>64</u> 70	<u>31</u> 176	<u>27</u> 70	<u>39</u> 55	<u>46</u> 51	<u>41</u> 63	<u>26</u> 33	566 176	32	31	70

Աղյուսակ 5. Քամի

Բնակավայրի, օրերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ձևշում, (հՊա)	Սամիներ	$\frac{\text{Կրկնելությունը, \%}}{\text{Միջին արագությունը, մ/վ}}$, ըստ ուղղությունների								Անոտորի կրկնելությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Երակշռող ուղղությունը՝ հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին՝ մ/վրկ	Գերակշռող ուղղությունը՝ դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հուլիսին՝ մ/վրկ
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս Արևմտյան (ՀսԱրմ)						
Կապան	935.6	հունվար	<u>2</u>	<u>2</u>	<u>29</u>	<u>30</u>	<u>6</u>	<u>5</u>	<u>18</u>	<u>8</u>	46	1,0	Հվ Արլ	2,4	Արլ	2,3
			2,2	2,0	2,3	2,0	1,9	1,6	2,2	1,9						
		ապրիլ	<u>2</u>	<u>1</u>	<u>37</u>	<u>32</u>	<u>4</u>	<u>3</u>	<u>12</u>	<u>9</u>	36	1,5				
			2,5	2,0	2,9	2,5	2,3	1,9	2,7	2,0						
		հուլիս	<u>2</u>	<u>2</u>	<u>31</u>	<u>34</u>	<u>6</u>	<u>3</u>	<u>11</u>	<u>11</u>	39	1,2				
			2,2	1,9	2,7	2,4	1,9	1,6	2,0	1,6						
		հոկտեմբեր	<u>1</u>	<u>1</u>	<u>34</u>	<u>32</u>	<u>6</u>	<u>4</u>	<u>12</u>	<u>10</u>	44	1,1				
			2,1	1,7	2,5	2,2	1,9	1,6	2,0	1,3						

Աղյուսակ 6. Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը (մաս-1)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C														Դիտարկված նվազագույնը
	Ամենցուրտ օրվա ապահովվածություն			Ամենցուրտ հնգօրյակի ապահովվածություն			Ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	Ամենացուրտ ամիսների միջինը	Տարբեր ապահովվածությամբ (%) նվազագույն ջերմաստիճանը						
	Ապահովվածություն (%)								1	2	5	10	20	50	
	0,98	0,95	0,92	0,98	0,95	0,92									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Կապան	-14	-11	-11	-11	-9	-9	1.9	-0.1	-23	-21	-20	-18	-16	-14	-22

Աղյուսակ 6. Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը (մաս-2)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C													
	Օրական տատանումը							Ամենացուրտ ամսվա օրական միջին տատանումը	Միջին օրական նվազագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում					
	Առավելագույն օրական տատանումը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում								«ո»					
	2	5	10	20	50	100	2		5	10	20	50	100	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Կապան	21	23	24	25	26	27	12.2	-7	-10	-11	-13	-14	-15	

Աղյուսակ 7. Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը (մաս-1)


Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C									
	Ամենատաք օրվա միջին օրական ջերմաստիճանը		Ամենաշոգ ամսվա միջինը	Տարբեր ապահովվածությամբ (%) առավելագույն ջերմաստիճանը						Դիտարկված առավելագույնը
	ապահովվածություն			Ապահովվածություն (%)						
	0.99	0.95		1	2	5	10	20	50	
1	2	3	4	5	6	7	8	9	10	
Կապան	30	30	24	42	41	40	39	38	36	42

Աղյուսակ 7. Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը (մաս-2)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C														
	Օրական տատանումը							Միջին օրական առավելագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում							
	Առավելագույն օրական տատանումը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում							Ամենատաք ամսվա օրական միջին տատանումը	Ամենատաք ամսվա առավելագույն օրական միջին տատանումը	«ո»					
	«ո»									2	5	10	20	50	100
	2	5	10	20	50	100	2			5	10	20	50	100	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	
Կապան	20	22	23	24	25	26	13.5	24.1	27	28	29	29	30	31	

Աղյուսակ 8. Կլիմայական շրջանների ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը

N	Կլիմայական շրջան	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Կլիմայական բնութագիր
1	Տաք Ցածրադիր շրջաններ	750-900	Ամառ՝ չոր, շոգ, միջին ջերմաստիճանը հուլիսին 21°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ Զմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ 0- 5°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 60-70%, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ



Նկար 5. ՀՀ Կլիմայական շրջաններ

Աղբյուրը՝ ՀՀՇՆ 22-01-24 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմեր.

5.3. Ջրային ռեսուրսներ

Կապանի հիմնական ջրագրական միավորը Ողջի գետն է միջին հոսանքում՝ իր Վաչագան, Գեղանուշ, Աճանան, Գիրաթաղ, Գեղի, Սևքար վտակներով:

Ողջի գետը մարզի մեծությամբ երկրորդ գետն է՝ 85 կմ երկարությամբ, որն սկիզբ է առնում Կապուտջուղի գագաթամերձ լանջերից և հոսում մեծ մասամբ անտառապատ խոր կիրճով: Ողջի գետը ունի մեծ անկում, որը գետի վերին հոսանքում մեկ կիլոմետրի վրա հասնում է 60 մետրի:

Ստորև աղյուսակում բերված են Ողջի գետավազանի ջրային հաշվեկշռի տարրերի միջին բազմամյա արժեքները:

Աղյուսակ 9. Ողջի գետավազանի ջրային հաշվեկշռի տարրերի միջին բազմամյա արժեքները

Գետավազան	Մակերես, կմ ²	Տեղումներ Մլն.մ ³ մմ	Գոլորշիացում Մլն.մ ³ մմ	Գետային հոսք Մլն.մ ³ մմ	Խորքային հոսք Մլն.մ ³ մմ
Ողջի	1240	<u>917.9</u> 740	<u>419.5</u> 338.2	<u>416.6</u> 335.9	<u>81.7</u> 65.9

Աղբյուրը՝ ՀՀ ՇՄՆ ՀՄԿ ՊՈԱԿ՝ մշակված «Գեոինֆո» ՄՊԸ-ի փորձագետների կողմից, 2022թ.

Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են Վաչագան գետի վրա, Կապան քաղաքի տարածքում: Վաչագան գետը Ողջի գետի աջ վտակն է և սկիզբ է առնում Խուստուփ լեռան հյուսիս-արևելյան լանջերից: Գետի երկարությունը 11կմ է, ջրավազանի մակերեսը 32քմ: Վաչագան գետի գետային հոսքի բնութագրիչները Վաչագան-Կապան դիտակետում բերված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Վաչագան գետի գետային հոսքի բնութագրիչները (համարիչ՝ ջրի ելքը (Q), մ³/վ, հայտարար՝ հոսքի ծավալը (W), մլն. մ3)

Գետ-դիտակետ	Ջրհավաքավազանի մակերես, կմ	Գետային հոսք						
		Բազմամյա միջին	2020թ	տարբեր ապահովվածության				
				25%	50%	75%	95%	99%
Վաչագան – ք.Կապան	35.0	<u>0.42</u> 13.35	<u>0.39</u> 12.18	<u>0.47</u> 14.82	<u>0.36</u> 11.35	<u>0.31</u> 9.78	<u>0.23</u> 7.25	<u>0.21</u> 6.62

Աղբյուրը՝ ՀՀ ՇՄՆ ՀՄԿ ՊՈԱԿ՝ մշակված «Գեոինֆո» ՄՊԸ-ի փորձագետների կողմից, 2022թ.

2023-2024թթ. Հարավային ջրավազանային կառավարման տարածքում ջրի որակի մշտադիտարկում իրականացվել է Կարճևան, Մեղրիգետ, Գեղի, Որոտան, Սիսիան, Վարարակ և Աճաճան գետերում: Ջրի որակն այդ գետերում գնահատվել է 3-5 (միջակ-վատ) դասերի:

Վաչագան գետի ջրի որակի վերաբերյալ տվյալները բացակայում են:

Ողջի գետի ջրի որակը ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից վերջին դիտարկումը եղել է 2021թ.-ին, որի տվյալների բերված է նկար 6-ում:

Ջրի որակի գնահատումն իրականացվել է ըստ ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկությունից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշման:



Նկար 6. Ողջի գետի ջրի որակը

Նկարից երևում է, որ.

- Քաջարանից 1.7 կմ վերև գնահատվել է «լավ» որակ
- Քաջարանից 1.8 կմ ներքև գնահատվել է «վատ» որակ
- Կապանից 0.8 կմ վերև գնահատվել է «միջակ» որակ
- Կապանի օդանավակայանից 0.5 կմ ներքև գնահատվել է «վատ» որակ

5.4. Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Կենտրոնը մթնոլորտային օդի որակի մոնիթորինգն իրականացնում է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) հետ համեմատությամբ:

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 դիտակետ: 2023 թվականին Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները (Աղյուսակ 11): Նախորդ տարվա համեմատությամբ ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան

աճել է 3%-ով, ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան նվազել է 16%-ով: Քաղաքի մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը միջինից ցածր մակարդակի է՝ 0.62: Մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 2 նյութերի) միջինից ցածր մակարդակի է, մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը՝ 0.62 է (ծծմբի երկօքսիդ՝ 0.37, ազոտի երկօքսիդ՝ 0.25): Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ազոտի երկօքսիդի աճման, իսկ ծծմբի երկօքսիդի նվազման տենդենց:

Կապանում աղտոտող նյութերի (ազոտի երկօքսիդ, ծծմբի երկօքսիդ) հնգամյա միջին ֆոնային կոնցենտրացիաները համապատասխանաբար կազմել են 0.012մգ/մ³ և 0.018մգ/մ³:

Աղյուսակ 11. 2023 թվականին Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները

Նյութի անվանում	Բնութագրիչ	Տարեթիվ					Տենդենց
		2019	2020	2021	2022	2023	
Ծծմբի երկօքսիդ	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.021	0.018	0.009	0.021	0.019	-0.0002
	Փորձանմուշների քանակ	235	252	275	252	275	
Ազոտի երկօքսիդ	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.007	0.009	0.017	0.014	0.014	0.0020
	Փորձանմուշների քանակ	250	262	273	253	264	

5.5. Հողերի բնութագիրը

Կապանի տարածքում հողառաջացնող բազմազան ապարներ կան: Բարգուշատի և Մեղրու լեռների բարձրադիր տարածքներում տարածված են լեռնամարգագետնային թույլ ճմային, խորքային չհագեցած հողերը, որոնք ցածրադիր մասերում վերածվում են մարգագետնա-տափաստանային մնացորդային չհագեցած հողերի: Խուստուփի բարձրադիր մասերում հոծ անտառը ձևավորել է անտառային դարչնագույն կրազերծված կավայնացած հողեր:

Կապանից հարավ գերակշռում են անտառային դարչնագույն կրազերծվախ հողերը, որոնք անտառագուրկ տարածքներում վեր են ածվել տափաստանների: Այս հողերը հիմնականում գրավում են արոտավայրերն ու խոտհարքները: Քաղաքից դեպի հարավ արևելք, հարթավայրային տարածքներում գտնվում են անտառային դարչնագույն կարբոնացված տափաստանային հողերը:

Գետերի հովիտներում հողերը այլուվիալ, այլուվիալ-պրոյուվիալ բերուկներ են, կավավազներ՝ կոպիճի, խճավազի և գլաքարերի տղմավազային երևակումներով: Բարձրադիր մասերում կան մայրական ապարների մերկացումներ:

Տարածքի հողերն ունեն երոզվածության տարբեր աստիճան: Հիմնական պատճառը անթրոպոգեն ազդեցությունն է, մասնավորապես բացահանքերը, լցակույտերը, բաց հանքերից հանված չռեկուլտիվացված ապարները: Անտառային տարածքներում հողերի էրոզիայի աստիճանը ցածր է:

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- ✓ մետաղաձուլական գործարանները,
- ✓ արդյունաբերական և կենցաղային թափոնները,

- ✓ ժամանակակից գյուղատնտեսությունը,
- ✓ տրանսպորտը:

2022 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Գեղարքունիկ, Տավուշ, Կոտայք, Արարատ, Սյունիք, Շիրակ և Արմավիրի մարզերում: Կապան քաղաքի հողերում 2022թ.-ի 4-րդ եռամսյակում մետաղների կոնցենտրացիաների համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցման վերաբերյալ տեղեկատվությունը բերված է աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. Կապան քաղաքի հողային ծածկույթի աղտոտվածությունը ծանր մետաղներով

Քաղաք	Վանաղիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
	Գերազանցումը համապատասխան ՍԹԿ-ից, անգամ						
Կապան	1.1-2.2	107.7-213.3	7.7-23.7	1.7-15.7	9.3-17	6.5-12	1.5-10.7

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:

Տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանները

Համաձայն իրականացված տեղագնման գետի հունում գրունտների նկարագրությունը հետևյալն է՝

0,0-2,0 մ Գետաքարեր, կոպիձ, ճալաքար, ավազա-կավավազային լցոնով, մշակման խումբը՝

- 20%--§6r (աղ.1-1) IV կարգ
- 50%--§6d (աղ.1-1) V կարգ
- 20%--§6e (աղ.1-1) VI կարգ
- 10%--§20a (աղ.3-1) VII կարգ

5.6. Սեյսմիկ պայմանների բնութագիրը

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է ակտիվ երկրաշարժային գոտում: Հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ զոնաները. Մերձքոռայան, Սոմխեթա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Զանգեզուրի, Երևան-Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Հիմնականում նշված զոնաների սահմաններով է անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները, որոնցից ամենախոշորն են Սևան-Աքերայի, Շիրակ – Զանգեզուրի և Միջին Արաքսյան /Երևանյան/ բեկվածքները: Բեկվածքների այս զոնաները թափանցում են երկրկեղևի 40-50 կիլոմետր խորություններ, իսկ երկրկեղևի մակերեսին արտահայտվում են 5-10 կմ լայնություն ունեցող գոտիներով, որոնց բնորոշ է օֆիոլիթային զուգորդության ձևափոխված ապարներ:

Սեյսմատեկտոնական տեսակետից շրջանը տեղադրված է Սյունաց լեռնաշխարհում՝ բարձրունքների վրա՝ սեյսմիկ անկայուն գոտում: Երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը հանքային հարթակի արևմտյան մասում հասնում է 8-9 բալ՝ ըստ Ռիխտերի

12 բալանոց սանդղակի, իսկ առավելագույն հորիզոնական արագացումները 0,2-0,3g: Արևելյան մասում կանխատեսվում է մինչև 8 բալ և 0,1-0,2g արագացմամբ (տես նկար 7):



Նկար 7. ՀՀ սեյսմիկ գոտիները համաձայն ՀՀՇՆ II-6-02.2006

Ֆիզիկա-երկրաբանական վտանգավոր պրոցեսներից և երևույթներից տարածքում առկա են սողանքները, փլվածքները, սելավները, քարաթափերը, հեղեղատառաջացումը, կողային և հունային էրոզիան, համատարած մակերեսային լվացումը, տեղական ջրածածկումը, ջրհեղեղումը և այլն:

5.7. Կենսաբազմազանություն

Կապան քաղաքն ամբողջովին ընդգրկված է Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանում (ֆլորիստիկ շրջանը գտնվում է 300-3900մ բարձրությունների վրա), որտեղ հանդիպում է մոտ 2000 բուսատեսակ՝ համակեցությունների հետևյալ տիպերով.

- ✓ կիսաանապատային
- ✓ անտառային
- ✓ տափաստանային
- ✓ մարգագետնային
- ✓ նոսրանտառային

Այստեղ կա ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված 94 բուսատեսակ, որոնցից 20-ը գտնվում են կրիտիկական վիճակում, 46-ը վտանգված տեսակ են, 25-ը՝ խոցելի, 3 տեսակ գտնվում են անհետացման վիճակին մոտ: 41 տեսակը էնդեմիկ է:

Տարածաշրջանում հանդիպում են տարախոտային տափաստանային, անտառային նոսրանտառային, իսկ Կապանից հարավ-արևելք՝ կիսաանապատային բուսականությունը:

Շրջանը հարուստ է նաև ծառերով ու թփերով (մոտ 190 տեսակ): Անտառները հիմնականում ունեն ջրակարգավորիչ, հակաերոզիոն և միջավայրապաշտպան նշանակություն:

Անտառածածկ տարածքներում գերակշռում են կաղնու, բոխու և խառը անտառները: Տարածված են արքայական կաղնու, վրացական կաղնու և արևելյան կաղնու համակեցությունները: 2700մ-ից բարձր գտնվում են մերձալպյան մարգագետինները:

Անտառածածկ տարածքներում շատ են նաև վայրի պտղատու ծառերը (հունական ընկուզենի արևելյան խնձորենի, սալորենի հոն), դեղաբույսերն ու վայրի բույսերը:

Ցածրադիր կիրճերի հարավային լանջերում գերակշռում են գիհու նոսր անտառները, շիբլյակների նոսրանտառներում հանդրոում են արևելյան կաղնին, վրացական թխկին, ալեհեր կեռասենին, իլենու, գիհու, տանձենու ու մասրենու տարբեր տեսակներ:

Խոտածածկույթում գերակշռում են քսերոֆիլ բուսատեսակներն ու էֆեմերները: Գարնանը խոտածածկի հիմնական տեսակներն են կուսածաղիկ խոտային, Բերենիկե բազմաբաժան, խուլեղինջ ցողունագիրկ և այլն:

Շիբլյակներում գազուտները շրջապատված են ճիւմ առաջացնող հացազգիներով: Ամենուրեք հանդիպում են բանգի սևը, կարմիր և սողացող երեքնուկը, դեղատու խատուտիկն ու իշառվույտը, սովորական ծոպաչառը, սովորական հազարատերևուկը, դաշտային ձիաձետը, սովորական ճարճատուկը, թռչնային մատիտեղը, բանջարանոցային դանդուռը, սովորական սիբեխըզանգուրն ավելուկը և այլն:



Կուսածաղիկ խոտային (*Vinca herbecea*)



Հազարատերևուկ սովորական (*Achillea millefolium*)



Օշինդր դառը (*Artemisia absinthium*)



Ճարձաստուկ սովորական (*Cichorium intybus*)

Կենդանական աշխարհը

Տարածաշրջանի կենդանական աշխարհը բավականին բազմազան է և հարուստ: Բազմազան է ոնոդնաշարոավորների ֆաունան (որդեր, մրջյուններ, մեղու, ծորիդ, ճոխկ, մորեխ, փայտոջիլ, թիթեռների տեսակներ, երկթևանիներ և այլն), բազմաթիվ տեսակներ ընգրկված են ՀՀ Կարմիր գրքում: Սողունները ներկայացված են 23 տեսակով՝ Մողեսներից հանդիպում են դեղնափորիկը, իլիկամողեսը, Ռադդեի ժայռային մողեսը, միջին մողեսը բարեկազմ օձագլուխը: Հազվագյուտ տեսակներից հանդիպում է շերտավոր մերկաչքը: Օձերից հանդիպում են որդանման կույր օձը, արևմտյան վիշապիկը, կարմրափոր և քառաշերտ սահնճձը: Լայնորոն տարածված տեսակներից է գյուրզան: Կարկիթ գրքում գրանցվածներից են հայկական իժը և հայկական լեռնատափաստանային իժը:

Երկկենցաղներից հանդիպում են լճագորտը, փոքրասիական գորտը, կանաչ դողոշն ու փոքրասիական ծառագորտը:

Սյունիքի մարզում կա Կարմիր գրքում գրանցված 8 թռչնատեսակ՝ մեծ ենթարծիվ, տափաստանային հողմավար բազե, կովկասյան մարեհավ, անապատային կաքավ, վայրի հնդկահավ, սև փայտփոր և ալպիական ճայ:

Լայն տարածում ունեն նաև կաթնասունները՝ եղեգնակատու (*Felis chaus*), մացառախոզ, եվրոպական այծյամ, վայրի ոչխար (մուֆլոն), գորշ արջ, շնագայլ, անտառային կատու, նապաստակ, վայրի խոզ:

Հնդկական մացառախոզը, լայնականջ ոզնին, անտառակատուն գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Կարմիր գրքում գրացված տեսակներից հանդիպում են չղջիկներից՝ մեծ և փոքր պայտաքիթ (*Rhinolophus ferrumequinum* Schreb., *Rhinolophus hipposideros* Bechstein) և

Մեհելլիի պայտաքիթը (*Rhinolophus mehelyi* Matschie) և Հայկական սպիտակատամը (*Crocidura armenica* Gureev):



Եղեգնակատու (*Felis chaus*)



Վայրի ոչխար (մուֆլոն) *Ovis orientalis gmelinii*



Հնդկական Մացառախոզ (*Histryx indica*)



Կոնչան բադ, (*Anas platyrhynchos*)



Մեհելլիի պայտաքիթը (*Rhinolophus mehelyi* Matschie)



Հայկական սպիտակատամը (*Crocidura armenica* Gureev):

Վաչագան գետի հունի մաքրման աշխատանքների իրականացման տեղամասում բացակայում են բույսերի վայրի և կարմիրգրքային տեսակները:

Տարածքում առկա են 32 ծառ ու թուփ՝ հիմնականում թխկի, արևելյան սոսի և բարդի, ինպես նաև պտղատու ծառեր՝ ընկուզենի, թզենի, բալենի և այլն:

Տարածքում ՀՀ Բույսերի կարմիր գրքում ներառված տեսակները բացակայում են:

Այստեղ չեն հայտնաբերվել նաև ՀՀ Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ: Վաչագան գետում շատ հազվադեպ հանդիպում են հետևյալ ձկնատեսակները՝ արևելյան տառեխիկ, կողակ և արևելյան թեփուղ:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

«Զանգեզուրի կենսոլորտային համալիր»

2013թ.-ին ՀՀ կառավարության N 1465-Ն որոշման համաձայն ստեղծվեց «Զանգեզուրի կենսոլորտային համալիրը», որն իր մեջ ներառում է՝

- ✓ «Շիկահող» պետական արգելոցը
- ✓ «Մոսու պուրակ» պետական արգելավայրը
- ✓ «Զանգեզուր» պետական արգելավայրը
- ✓ «Սև լիճ» պետական արգելավայրը
- ✓ «Արևիկ» ազգային պարկը
- ✓ «Բողաքար» պետական արգելավայրը
- ✓ «Խուստուփ» պետական արգելավայրը:

Կենսոլորտային համալիրի ստեղծման նպատակը ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնազանգվածի անտառային գոտու վերին հատվածի, մարգագետնատափաստանային և մարգագետնային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումն էր:

Գորիսի պետական արգելավայր

Հայաստանի Հանրապետության 26 արգելավայրերից մեկն է: Կազմավորվել է 1972-ին, ունի 1850 հա տարածք: Գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Որոտան գետի ավազանում՝ ծովի մակարդակից 1400-2800մ բարձրություններում: Ստեղծվել է անտառային լանդշաֆտների և կենդանական աշխարհի (այծյամ, բծավոր եղջերու, գորշ արջ, կովկասյան մայրեհավ) պահպանության նպատակով:

Շիկահողի արգելոց

Արգելոց գտնվում է Սյունիքի մարզում՝ Խուստուփ լեռան հարավ արևելյան և Մեղրու լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջերին, Ծավ և Շիկահող գետերի վերին ավազաններում, 700-2800մ բարձրություններում: Այն հիմնվել է 1958 թվականին: Տարածքը կազմում է մոտ 10 330 հեկտար: Կազմավորվել է կաղնու, բոխու, հաճարենու, սովորական կենու, սոսու անտառների և կենդանիների պահպանության նպատակով:

Այս տարածքները դուրս են ծրագրի անմիջական ազդեցության գոտուց: Դրանք գտնվում են Կապանից 5-45կմ հեռավորության վրա: Պահպանվող ամենամոտ տարածքը «Զանգեզուր» պետական արգելավայրն է՝ մոտ 5կմ, ամենհեռուն՝ «Սև լիճ» արգելավայրը՝ մոտ 46կմ հեռավորությունների վրա:

Պատմամշակութային հուշարձաններ

Կապանը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Նախկին «Կատար» բնակավայրի տարածքում կանգուն է «Կատարի վանք» եկեղեցին (քաղաքից 5 կմ դեպի արևմուտք, Ողջի գետի աջ ափին): Հիշարժան կառույցներից են Կատարավանք ամրոցը (X-XVIII դդ, քաղաքից 5 կմ դեպի արևմուտք, Ողջի գետի աջ ափին)՝ իր օժանդակ շինություններով, Կլոց քար ամրոցը (X դ, ավերված), Հալիձորի ամրոցը բազմաթիվ դամբարաններով (10-18դդ, Ողջի գետի բարձրադիր աջ ափին, ՀԵԿ-ի մոտ): 1723 թվականին Դավիթ Բեկի կողմից վերակառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին և Վահանավանք եկեղեցին (Կապանից 7կմ հետավորության վրա) իրենցից ներկայացնում են մի վանական համալիր, Սուրբ Գրիգոր եկեղեցին աչքի է ընկնում բազմաթիվ տապանաքարերով:

Վանական համալիր Բեխի անապատը (Տանձափարախի անապատ, Արիստակես անապատ, 10-17 դդ) գտնվում է թաղամասից 4 կմ հարավ-արևելք, բարձր լեռան արևելյան լանջին, անտառի մեջ:



Հալիձորի ամրոց



Վահանավանք եկեղեցի

Քաղաքի պատմության և մշակութային հուշարձանների ցանկում, որը 2002թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից, ներառված է 177 հուշարձան (21 միավոր):

Ինչպես բնության հատուկ պահպանվող տարածքները, այնպես էլ պատմամշակութային հուշարձանները նախագծի իրականացման տարածքից գտնվում են բավականին մեծ հեռավորությունների վրա և աշխատանքների իրականացման ժամանակ ոչ մի ազդեցության չեն ենթարկվելու:

5.8. Աղմուկ և թրթռոց

Առավելագույն թույլատրելի աղմուկի մակարդակները սահմանվում են ՀՀ առողջապահության նախարարի «Աղմուկը աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի վայրերում» 06.3.2002թ. թիվ 138 որոշմամբ հաստատված N2-III-11.3 «Աղմուկը աշխատատեղերում, բնակելի և հասարակական

շենքերում և բնակելի վայրերում» սանիտարական նորմերով: Աղմուկի թույլատրելի մակարդակները ցույց են տրված ստորև աղյուսակում:

Աղյուսակ 13. ՀՀ-ում աղմուկի առաելագույն թույլատրելի մակարդակը

Ընկալիչ	Աղմուկի առաելագույն թույլատրելի մակարդակները		
	Ժամերը	dBLAEQ	dBLAMAX
Բնակելի և հասարակական շենքերի մոտակայքում	22:00-06:00	55	70
	06:00-22:00	45	60

Կախված տարածքի և օրվա ժամից, աղմուկի նորմայի սահմանները տատանվում են 45 - 60 դեցիբել:

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ երթևեկող ավտոտրանսպորտային միջոցները: Ելակետային իրավիճակում տարածքում աղմուկի մակարդակը ցածր է 50 դեցիբելից:

Օգտագործվող շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները ընտրվելու են այն նախապայմանով, որ դրանց տեխնիկական ցուցանիշներում աղմուկի մակարդակը կառավարման խցում չգերազանցի 80 դԲա: Այս ցուցանիշը թույլ կտա ապահովել աշխատանքային տեղամասերի սանիտարական նորմերը, իսկ հաշվի առնելով հեռավորությունը բնակելի թաղամասերից, ազդեցությունը բնակավայրերում գործնականում չի զգացվի:

ՀՀ-ում թրթռման նորմերը սահմանվում են “Հիգիենան աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի վայրերում” HN N 2.2.4-009-06 նորմերով, որը դասակարգում է թրթռումը, կարգավորման պարամետրերը և սահմանային թույլատրելի մակարդակն աշխատանքի վայրերում, բնակելի շենքերի, հասարակական շենքերի և շինարարության ոլորտներում:

Նախատեսվող գործունեության ընթացքում առաջացող թրթռումները դասակարգվում են որպես տեղային թրթռում (վիբրացիա), որն առաջանում է աշխատատեղերում ձեռքով դեկավարվող մեքենաներից և սարքավորումներից, փոխանցվում է ձեռքերի միջոցով և ունի կոորդինատային համակարգի Xտ, Yտ, Zտ առանցքներին համապատասխան թրթռման ազդեցության ուղղվածություն:

Նման դասի թրթռման սահմանային թույլատրելի մեծությունն ըստ Xտ Yտ Zտ առանցքների սահմանված է 2մ/վ² և 126դԲ:

6. ԱԶԴԱԿԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Կապանը Սյունիքի մարզի մարզի մարզկենտրոնն է: 2017 թվականի նոյեմբերից, իր մեջ միավորելով տարածաշրջանի գյուղական համայնքները, դարձել է Կապան խոշորացված համայնք: Գտնվում է երկրի հարավ-արևելքում, Երևանից 320 կմ հարավ-արևելք Ողջի գետի ափին, Խուստուփ լեռան հյուսիսային ստորոտին, ծովի մակարդակից 910 մ բարձրության վրա:

Քաղաքի բնակչության թիվը 2022թ. մարդահամարի տվյալներով կազմում է 33200 մարդ, որի 51,4%-ը կազմում են տղամարդիկ, իսկ 49,6%-ը՝ կանայք: Բնակչության 20%-ը կենսաթոշակառուներ են:

Տնտեսության առաջատար ոլորտն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, ալյումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և էլեկտրական արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Պատմականորեն Կապանը հանդիսանում է հանրապետության հանքարդյունաբերության կենտրոններից: 1840թ. հույների կողմից հիմք է դրվել ընդերքօգտագործմանը: Պղնձով հարուստ ընդերքն օգտագործելու նպատակով ստեղծվել է Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատը, որի լուծարումից հետո հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն է իրականացնում "Դինո Գլոդ Մայնինգ Քամինի" ՓԲԸ-ն: Ընկերությունը բնակչությանը ապահովում է աշխատանքով, ինչը դրական է ազդում համայնքի ընդհանուր զարգացման Համայնքի տարածքում տնտեսական գործունեություն են իրականացնում "Կապանի մեքենաշինական գործարան" ԲԲԸ-ն, Կապանի "Ճանապարհների շինարարության և շահագործման" ՍՊԸ-ն, Կապանի "Նորոզին" ՍՊԸ-ն, "Վայբլ" ՍՊԸ-ն և այլն: Համայնքի տարածքում գործում են սննդարդյունաբերության, մանրամեծածախ առևտրի, հանրային սննդի, կենցաղային սպասարկման բազմաթիվ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռներեցներ: Համայնքի բնակչությանը կապի, ջրամատակարարման, գազի, էներգամատակարարման ոլորտում ծառայությունները մատուցվում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների միջոցով: Բնակչության բուժսպասարկման և առողջապահության խնդիրների սպասարկումն իրականացվում է "Կապանի բժշկական կենտրոն" ՓԲԸ-ի, "Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր" ՓԲԸ-ի, "Կապանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա" ՓԲԸ-ի միջոցով: Համայնքի ենթակառուցվածքում գործում են "Կապանի կոմունալ ծառայություն" ՀԲՀ-ն:

Համայնքի տարածքում գործում են 13 հանրակրթական դպրոցներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների Կապանի մասնաճյուղեր, քոլեջներ, "Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն" ՊՈԱԿ-ը, Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի Կապանի մասնաճյուղը, Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրը: Համայնքի ենթակառուցվածքում են արտադրարձակական և նախադրարձակական ուսումնական հաստատություններ՝ 12 ՆՈՒՀ, 3 երաժշտական դպրոց, 3 մարզադպրոց, արվեստի և գեղարվեստի մանկական դպրոցներ:

2011 թվականին ստեղծվել է "Կապանի մանկական կենտրոն" ՀՈԱԿ-ը, որն իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական, մանկավարժական, իրավական պաշտպանության աջակցության ծրագրեր: Մշակութային ծրագրերը քաղաքում իրականացվում է Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի, "Մշակույթի կենտրոնի" միջոցով: Քաղաքի մշակութային օջախներից են՝ երկրագիտական թանգարանը, Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանը, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը, ակումբազբադարանային միավորումը: Երեխաների ժամանցը կազմակերպվում է "Վ. Սարգսյանի անվան մանկական զբոսայգի" ՀԲՀ-ի միջոցով:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Նախատեսվող գործունեությունն իրականացնելու ժամանակ կանխատեսվում է շրջակա միջավայրի վրա որոշակի բացասական ազդեցություններ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ և իրենց բնույթով կլինեն սահմանափակ ու կարճատև:

7.1. Շինարարական աշխատանքների փուլ

Շինարարական աշխատանքների ցուցանիշները.

- տևողությունը՝ 12 ամիս,
- շինարարական տեխնիկան՝
 - Բուլդոզեր - 2 հատ
 - Էքսկավատոր հիդրոմուրճով - 2 հատ
 - Փոքր էքսկավատոր – 1 հատ
 - Ինքնաթափ բեռնատար - 4 հատ
 - Ավտոամբարձիչ (Առնվազն 18մ սլաքի թռիչքով և 12տ բեռնունակությամբ) – 2 հատ
 - Շերեփավոր բեռնիչ- 2 հատ
 - Խորքային թրթռիչ – 4 հատ
 - Շարժական էլեկտրաեռակցման սարքավորում – 2 հատ
 - Պոլիէթիլենե խողովակների եռակցման սարքավորում – 1 հատ
 - Ավտոբետոնամղիչ – 1 հատ
 - Նիվելեր/Տախետմետր – 2 հատ
 - Ներքին այրման շարժիչով շարժական գեներատոր – 2 հատ

Հողային աշխատանքները կիրականացվեն վերը նշված մեքենա-մեխանիզմներով, որի ծավալային ցուցանիշները հետևյալն են՝

- Հողային աշխատանքներ (հանվող զանգված)՝ 10660.0 մ³,
- Ետլիցք և տարածքի բարեկարգում՝ 8913.0 մ³,
- Ոչ պիտանի գրունտի տեղափոխում՝ 1747.0 մ³,

7.1.1. Մթնոլորտային արտանետումներ

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում արտանետումները առաջանում են հողային շերտի փորման, նյութերի բիտումապատման և շինարարական տեխնիկայի աշխատանքի արդյունքում:

Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը

Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները առաջանում են հիմնականում էքսկավատորների աշխատանքի, հողային զանգվածի

հանման, ավտոինքնաթափ մեքենաների բեռնման ժամանակ: Հաշվարկները կատարված են հետևյալ եղանակով /4/:

$$Q = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times P_6 \times B) \times 10^6 / 3600 \text{ տ/ժամ, որտեղ`}$$

P₁ - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0.05

P₂ – 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է փոշու աերոզոլում, 0.02 (խտությունը 2.7 գ/սմ³)

P₃ - գործակից, որը հաշվի է առնում շին.տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 3.0

P₄ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.6 (խոնավությունը մինչև 7%)

P₅ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.6

P₆ - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

G – վերամշակվող հողային զանգվածի քանակը, 10660.0 մ³ կամ 10660.0 x 2.3 = 24518.0տ/շին.ժամանակահատված:

Հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները տևելու են 12 ամիս`

$$12 \times 22 \text{ օր} \times 8 \text{ ժամ} = 2112 \text{ ժամ, հողային զանգվածը` } 24518.0 : 2112 = 11.61 \text{ տ/ժամ}$$

$$Q = (0.05 \times 0.02 \times 1.2 \times 0.6 \times 0.4 \times 11.61 \times 1.0 \times 0.6) \times 10^6 / 3600 = 23.018 \text{ գ/վրկ}$$

$$\text{կամ } 23.018 \times 2112 \times 3600 / 10^6 = 24.34 \text{ տ/շին. ժամանակ.}$$

Վնասակար նյութերի արտանետումների հաշվարկը շինարարական տեխնիկայի կողմից դիզվառելիքի օգտագործման արդյունքում

Շինարարական տեխնիկան (դիզելային վառելիքի ծախսը)`

$$\text{Աշխատանքային օրերի քանակը` } 12 \times 22 = 264 \text{ օր:}$$

Ընդամենը դիզ.վառելիքի միջին օրական ծախսը կկազմի 145 լ:

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի¹ հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NOx	CH	ՑՕՄ	CO	N2O	CO2	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

¹ Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Քոռ ինվեստորի օֆ Էմիշնս ին Յուրոպ” (այսուհետև՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում” մեթոդոլոգիային համապատասխան:

Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները, կախված ավտոմոբիլային պարկի միջին տարիքից և տեխնիկական վիճակից, բերված են ստորև աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15. Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Ազդեցության գործակիցը	
		պարկի միջին տարիքի	տեխնիկական վիճակի
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	1.33	1.8
	CH	1.2	2.0
	NOx	1.0	1.0
	CO2	1.0	1.0
	N2O	1.0	1.0

Ածխածնի օքսիդի (CO), ածխաջրածինների (CH), և ազոտի օքսիդների (NOx) գործակիցները վերցված են “Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներից” (Մոսկվա, Հիդրոմետհրատ-1983), իսկ ածխածնի ենթօքսիդի (CO2) և ազոտի երկօքսիդի (N2O) գործակիցները ընդունվել են 1, քանի որ որևէ այլ մեծություններ դրանց համար չեն առաջարկվում:

Հաշվի առնելով շին. ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվը, ծախսը կկազմի՝ 145 լ/օր հաշվի առնելով տեսակարար կշիռը 0.85` 123.25 կգ/օր, կամ 264 x 123.25 = 32538 կգ/շին.ժամանակահատված:

Հաշվի առնելով բենզապիրենի չափազանց քիչ քանակները, այդ նյութի տվյալները չեն ներկայացվում:

Աղյուսակ 16. Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտից վնասակար նյութերի արտանետումների քանակը

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, տ/շին.ժամ.	Արտանետումների քանակը, գ/վրկ
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	87.14	4.82	0,95
	CH	0.58	0,032	0,006
	NOx	42.3	2,34	0,46
	N2O	0.122	0,007	0.0014
	ՑՕՍ	8.16	0,452	0,092
	ՊՍ	4.3	0,24	0,046

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$ESO_2 = 2\Sigma ksb, \text{ որտեղ }`$$

ks-ը վառելիքում ծծմբի պարունակությունն է՝ 0.003 տ/տ (գ/գ)

b –ն վառելիքի ծախսն է՝ 123250 գ/օր

SO₂ = 2 x 123250 x 0.003 = 739.5 գ/օր, 0.009գ/վրկ, 0.20 տ/շին.ժամ:

Բիտումապատում

Բիտումապատման ժամանակ ընթանում է բիտումի զանգվածի բացման /նոսրացման/ համար օգտագործված լուծիչների գոլորշիացում: Հաշվարկը կատարվել է համաձայն Corinair (6) մեթոդակարգի (SNAP CODE 040611):

$$G = V_{asf} \times K_1 \times K_2 \times d, \text{ որտեղ}$$

G – օրգանական նոսրացուցիչի արտանետումը շինարարական ժամանակամիջոցում, տ/շին

V_{asf} - բիտումի ծավալը, 3.97 մ³,

K₁ - նոսրացուցիչի պարունակության գործակիցը, 0.1

K₂ - ածխաջրածինների արտանետման բաժնեմասը ըստ նոսրացուցիչի ծավալի, 0.05;

D - օրգանական նոսրացուցիչի միջին տեսակարար կշիռը, 0.86 կգ/լ

$$G = 3.97 \times 0.1 \times 0.05 \times 0.86 = 0.017 \text{ տ/շին.ժամանակ}$$

կամ բաժանելով բիտումապատման աշխատանքների ամբողջ ժամանակահատվածին, որը տևում է 35 օր, կստանանք՝

$$0.017 \text{ տ} \times 10^6 \text{գ/տ} : 35 \text{ օր} : 8 \text{ ժամ/օր} : 3600 \text{ վրկ/ժամ} = 0.017 \text{գ/վրկ}$$

Էռակցման աշխատանքներ

Էռակցման աշխատանքների տևողությունը 25 օր, ընդհանուր օգտագործվող AHO - 5 տեսակի էլեկտրոդների քանակը հաշվարկված է 185 կգ: Արտանետումները կկազմեն.

- էռակցման անեռոզ - 185 կգ x 14.4 գ/կգ = 2664 գ/շ.ժ (0.0027 տ/շ.ժ) կամ 2664 : 25 : 8 : 3600 = 0.0037 գ/վրկ,
- մանգանի միացություններ - 185 կգ x 1.87 գ/կգ = 346.0 գ/շ.ժ (0.0003 տ/շ.ժ) կամ 346.08 : 25 : 8 : 3600 = 0.0005 գ/վրկ:

Հաշվարկների արդյունքները՝ ամփոփված ըստ աշխատանքների տեսակների և առանձին նյութերի, բերված են աղյուսակ 17-ում: Հաշվարկներում միավորված են ազոտի օքսիդները և ածխաջրածիններ /ՑՕՄ/:

Արտանետումների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ և ստացված արդյունքները համեմատվել են բնակավայրերի համար սահմանված նորմերի /ՄԹԿ/ հետ:

Շարժական աղբյուրների արտանետումները տեղի են ունենում մեծ տարածքների վրա և հետագա հաշվարկներում չեն ներառվում, մնացած արտանետումները խմբավորվել են պայմանական հարթակի սահմաններում և դրանց ցուցանիշները, ինչպես նաև արտանետման աղբյուրի բնութագրերը բերված են աղյուսակ 18-ում:

Աղյուսակ 17. Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը շինարարության ժամանակահատվածում

Շինարարական աշխատանքների փուլերը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ, (տ/շին. ժամանակահատված)							
	Փոշի	CO	ՑՕՄ	NOx	ՊՄ	SO2	Էռակցմ. աերոզոլ	մանգանի օքսիդներ
1. Փորման-բեռնման աշխատանքներ	0.078 (0.79)	-	-	-	-	-	-	-
2. Տեխնիկայի շահագործում	-	0.95 (4.82)	0.014 (0.427)	0.039 (1.173)	0.004 (0.12)	0.005 (0.162)	-	-
3. Բիտումապատում	-	-	0.017 (0.017)	-	-	-	-	-
4. Եռակցման աշխատանքներ	-	-	-	-	-	-	0.0027 (0.0037)	0.0005 (0.0003)
ԸՆԴԱՄԵՆԸ	0.078 (0.79)	0.95(4.82)	0.031 (0.444)	0.039 (1.173)	0.004 (0.12)	0.005 (0.162)	0.0027 (0.0037)	0.0005 (0.0003)

Աղյուսակ 18. Մթնոլորտ արտանետվող նյութերի և աղբյուրների բնութագրերը

Արտանետման աղբյուրի անվանումը	Արտանետման աղբյուրի բնութագրերը			Գազային խառնուրդի բնութագրերը		Կոորդինատները				Վնասակար նյութերի արտանետումները		
	N	բարձրություն, մ	տրամագիծը, մ	V, մ/վրկ	T, 0C	X1	Y1	X2	Y2	անվանումը	գ/վրկ	տ/շին.ժամ.
Հարթակային չկազմակերպված արտանետումների աղբյուր	1	2.3	12.0	1.2	18.0	270	400	290	430	- անօրգանական փոշի - ՑՕՄ - եռակցման աերոզոլ - մանգանի օքսիդներ	0.078 0.031 0.0037 0.0005	0.79 0.444 0.0027 0.0003

Տնտեսական վնասի հաշվարկ

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտած դրամական համարժեքով: Տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է շրջակա միջավայրին հասցվող վնասը դրամային ցուցանիշներով գնահատելու համար և չի առաջացնում որևէ ֆինանսական պարտավորություն:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն գործող մեթոդակարգի (6): Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \sum Cq \Phi g \sum \Psi i \Phi i \quad (1), \text{ որտեղ}$$

U -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,

Cq -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9. աղյուսակի արդյունաբերական տարածքների համար, որի շարքին դասվում է նախատեսվող մաքրման կայանի տարածքը, ընդունվում է 4:

Ψi-ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, ածխածնի օքսիդի համար ընդունվում է 1, անօրգանական փոշու համար՝ 10, ազոտի օքսիդների համար՝ 12.5, ածխաջրածինների համար՝ 3.16, պինդ մասնիկների համար՝ 41.5, ծծմբային անհիդրիդի համար՝ 16.5, եռակցման աերոզոլի համար՝ 25, մանգանի միացությունների համար՝ 705:

Φi -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Φg-ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն

$$\Phi g = 1000 \text{ դրամ:}$$

Φi գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\Phi i = q (3 SUi - 2 U\theta Ui), SUi > U\theta Ui \quad (2)$$

որտեղ՝

UθUi-ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով: Հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման հաշվարկները ցույց տվեցին, որ սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում, փաստացի արտանետումները ընդունվում են որպես UθUi:

SUi-ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով, անօրգանական փոշի՝ 0.79, ածխածնի օքսիդ՝ 4.82, ազոտի օքսիդներ՝ 1.173, ածխաջրածիններ՝ 0.4, պինդ մասնիկներ՝ 0.24, ծծմբային անհիդրիդ՝ 0.162, եռակցման աերոզոլ՝ 0.004, մանգանի միացություններ՝ 0.0003:

q = 1՝ անշարժ աղբյուրների համար,

q = 3՝ շարժական աղբյուրների (ավտոտրանսպորտի համար):

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային ծավալային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

$$U = \sum \Phi q \sum \Psi_i \Phi_i = 4 \times 1000 \times \{10 \times 0.15 + 1 \times 4.82 + 12.5 \times 1.173 + 3.16 \times 0.28 + 41.5 \times 0.24 + 16.5 \times 0.162 + 25 \times 0.005 + 705 \times 0.0003\} = 139347 \text{ դրամ/տարի:}$$

Նշված գումարը որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

7.1.2. Կենցաղային և շինարարական թափոններ

Մաքրման կայանի շինարարության և շահագործման ժամանակ առաջացող կենցաղային և շինարարական թափոնների ցանկը դասակարգված է ըստ ՀՀ տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի և բերված է աղյուսակ 19-ում: Ինչպես երևում է աղյուսակից, նախագծի իրականացման ժամանակ առաջացող թափոնները պատկանում են վտանգավորության 4-րդ դասի:

Աղյուսակ 19. Շինարարության և շահագործման ժամանակ առաջացող կենցաղային և շինարարական թափոնների ցանկ

Վտանգավորության 4-րդ դաս			
Ծածկագիրը	Թափոնների անվանումը	Ազդեգատային վիճակը և ֆիզիկական ձևը	Ծագումը
31400901 11 00 4	Խճաքարային փոշի	Փոշենման	Շինարարական աշխատանքներ
31401200 01 00 4	Ասֆալտի և ասֆալթետոնի խառնուրդի մնացորդներ	Կոշտ	Շինարարական աշխատանքներ
31401104 01 00 4	Մանրախիճ	Կոշտ	Շինարարական աշխատանքներ
31401105 01 00 4	Ավազ	Կոշտ	Շինարարական աշխատանքներ
31401106 01 00 4	Կրաքար	Կոշտ	Շինարարական աշխատանքներ
31401108 01 00 4	Մանր ֆրակցիաների մաղվածք	Կոշտ	Շինարարական աշխատանքներ
91100100 01 00 4	Մշտական և ժամանակավոր բնակչության վայրերից առաջացած չտեսակավորված թափոններ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	Կոշտ	Մարդու կենսագործունեություն
31602500 04 00 4	Հողային, ավազային շլամ, խրամատների հանվածքներ	Շլամ	Հողային աշխատանքներ
31402030301034	Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից պակաս)	Աղտոտված բնահողեր	Թափված վառելիքա-քսուքային նյութեր, վթարներ, աղտոտված բնահողի հեռացում, յուղերի ցցաթմբերի հեռացում
3140230401034	բենզինով աղտոտված ավազ (բենզինի պարունակությունը 15%-ից պակաս)	Աղտոտված բնահողեր	Թափված վառելիքա-քսուքային նյութեր, վթարներ, աղտոտված

		բնահողի հեռացում, բենզինի ցցաթմբերի հեռացում
--	--	--

Այսպիսով, ծրագրի շրջանակում առաջացող շինարարական թափոնները պատկանում են վտանգավորության 4-րդ դասին և ենթակա են վերամշակման, կամ կարող են տեղափոխվել համայնքային աղբավայր, առանց վնասելու մարդկանց առողջությունն ու շրջակա միջավայրը:

Շինարարության ընթացքում կառաջանա 1747,0մ3 ոչ պիտանի գրունտ, որը համայնքապետարանի կողմից տրված թույլտվության համաձայն շինարարը կտեղափոխի համապատասխան աղբավայր:

Շինարարության ամբողջ ժամանակաընթացքում կառաջա 2,91տ կենցաղային թափոն: Օրական առաջացած կենցաղային թափոնները կտեղափոխվեն քաղաքային աղբամաններ և կհեռացվեն ընդհանուր քաղաքային աղբահանության ժամանակ:

Ամբողջ շինարարության ընթացքում տրանսպորտային միջոցների կողմից կօգտագործվի 373,5տ քսայուղեր: Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումն իրականացվելու է շինարարական հրապարակից դուրս՝ հատուկ նախատեսված վայրերում՝ կանխելու համար տարածքի աղտոտումը վառելանյութերով ու քսայուղերով:

7.1.3. Ջրային ռեսուրսներ

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ավտոդողերի լվացման, ինչպես նաև բանվորների, վարորդների և պահակների կենցաղային-տնտեսական ջրօգտագործման համար:

Շինարարական հարթակների ջրցանի համար ջուրը նախատեսվում է վերցնել կամ անմիջապես գետից, որի համար Կապալառուն կղիմի ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար, կամ քաղաքային ռոռզման/ջրամատակարարման համակարգից: Կենցաղային և տնտեսական օգտագործման ջուրը նախատեսվում է վերցնել քաղաքային ջրամատակարարման ցանցից:

Շինարարության ժամանակ առաջացած կեղտաջրերը նախատեսվում է հեռացնել քաղաքային ջրահեռացման համակարգ:

Ավտոդողերի լվացում

Շինարարության ընթացքում նախատեսվում է շինհրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվաղողերի լվացում: Լվացված ջուրը, մինչև տարածքից հեռացումը, ենթարկվում է նախնական մաքրման համապատասխան մաքրման հարմարանքի միջոցով: Ավտոմեքենաների անվաղողերի լվացման հանգույցն իրնից ներկայացնում է դեպի ջրընդունիչ հոսակ հատակի որոշակի թեքությամբ բետոնե հարթակ: Լվացված ջուրը հոսակից լցվում է հարթակին կից կառուցված նախնական պարզարան, որտեղ ենթարկվում է երկու տիպի մաքրման.

1. նավթամթերքների կլանում պոլիմերային սպունգի միջոցով,
2. ջրի պարզեցում՝ պարզարանի հատակին ավազի նստեցմամբ (Գծապատկեր 1):

Նշված մաքրման հարմարանքից հետո հեռացվող մաքրված ջուրը կարելի է լցնել գետ, որոգման ջրանցք կամ գործող կոյուղու համակարգ:

Ավտոմեքենաների անվադողերի լվացման մաքրման հարմարանքի կազմակերպման և շահագործման պատասխանատվությունը կրում է կապալառուն:



Գծապատկեր 1. Ավտոդողերի լվացումից առաջացած ջրի մաքրման կառուցվածք

Շինարարական հրապարակներ

Հաշվի առնելով, որ միաժամանակ շինարարական աշխատանքները իրականացվում են մեկ հատվածում, որի հաշվարկային մակերեսը՝ ներառյալ գետի հունը, կազմում է մոտ 1.2 հա: Ջրցանի և ավտոդողերի լվացման մակերեսը կազմում է 0.6 հա, որը հաշվարկվել է գետի հունից դուրս մակերեսների համար:

$U_1 = S_1 \times K_1 \times T$, որտեղ.

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 6000 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրապահանջի նորմը, 0.006 մ³,

T - շինարարության ժամանակահատվածը օրերով, որի ընթացքում կունենանք ջրցանի և ավտոդողերի լվացման պահանջարկ՝ 95 օր

$U_1 = 6000 \times 0.006 \times 95 = 3420.0$ մ³/շին.ժամ. կամ 36.0 մ³/օր

Վարչական աշխատողների և բանվորների (այդ թվում վարորդների, պահակների) կոմունալ-կենցաղային ջրապահանջի հաշվարկ.

Աշխատակիցների և բանվորների (այդ թվում վարորդների) խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$W_{խ.տ.} = (n \times N + n_1 \times N_1) \times T_1$ որտեղ

n – ԻՏ և վարչական աշխատողների թվաքանակն է՝ 2 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

T_1 - աշխատանքային օրերի թիվն է՝ 264 օր

n_1 – բանվորների (այդ թվում վարորդների, պահակների) թվաքանակն է՝ 19 մարդ

N_1 - բանվորների ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

$W_{խ.տ.} = (2 \times 0.016 + 19 \times 0.016) \times 264 = 103.8$ մ³/շին.ժամ

Միջին օրական՝ 0.393 մ³/օր

Ընդամենը շինարարության փուլի ջրօգտագործումը կկազմի.

$3420.0 + 103.8 = 3523.8$ մ³/շին.ժամ կամ 13.35 մ³/օր

Կեղտաջրերի հաշվարկ

Շինարարական հարթակների ջրցանը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին:

Կեղտաջրեր առաջանում են միայն խմելու կենցաղային ջրօգտագործման արդյունքում:

Կորուստը կազմում է 5%, այստեղից կեղտաջրերը՝ $103.8 \times 0.95 = 98.33$ մ³/շին.ժամ կամ 0.37 մ³/օր:

Շինարարության ընթացքում նախատեսվող ժամանակավոր սանհանգույցները կկառուցվեն շին. հրապարակներով անցնող գործող կոյուղագծերի անմիջական հարևանությամբ և կեղտաջրերը կմիանան կոյուղու ցանցին:

Շինարարության ընթացքում ջրային ավազան աղտոտված կեղտաջրեր չեն թափվում, համապատասխանաբար ջրային ռեսուրսներին հասցված վնասի հաշվարկ չի կատարվել:

Վերակառուցվող արտաքին լուսավորության ցանցի էլ. Մնուցումը նախատեսվում է իրականացնել ներկայումս նույն ցանցը սնող գոյություն ունեցող էլ. վահանակից, ինչը համաձայնեցված է համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող քաղաքային լուսավորության ցանցի սպասարկման պատասխանատուների հետ: Վերակառուցվող արտաքին լուսավորության ցանցի առվելագույն էներգապահանջարկը կազմում է 2.32 կՎտ:

7.1.4. Հողային ռեսուրսների վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ազդեցությունը պայմանավորված է հողային զանգվածի տեղահանումով և տեղափոխումով:

Հանվող հողային զանգվածը կազմում է 10660.0 մ³, որից 8913.0 մ³ օգտագործվում է որպես ետլիցք և տարածքի բարեկարգման համար: Մնացած՝ 1747.0 մ³ ներառյալ շինարարության ընթացքում առաջացող շինարարական թափոնները, տեղափոխվում են Կապանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Հողերի լրացուցիչ աղտոտում շինարարության ժամանակ չի նախատեսվում, քանի որ աշխատանքներն իրականացվում են Կապան քաղաքի բնակեցված տարածքներում, ուր գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հողային ռեսուրսները բացակայում են:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, հողային ռեսուրսներին հասցված վնասի հաշվարկ չի կատարվել:

7.1.5. Կենսաբազմազանության վրա ազդեցություն

Նախագիծն իրականացվում է քաղաքային բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները, կենդանական ու բուսական տեսակների արեալները: Ուստի շինարարության ժամանակ դրանց վրա ազդեցությունները զրոյական են:

7.1.6 Աղմուկ և թրթռումներ

Շինարարության ընթացքում փոխադրամիջոցների և սարքերի շահագործման և շինարարությանն առնչվող այլ գործողությունների հետևանքով առաջացող աղմուկը

հիմնականում ազդելու է շինարարության տարածքին հարակից բնակելի տարածքների և շենքերի բնակիչների վրա: Շինարարության ընթացքում աղմուկի մակարդակը կարող է փոխվել՝ կախված իրականացվող գործողություններից, զգայուն ընկալիչների հեռավորությունից, ինչպես նաև մթնոլորտային պայմաններից:

- ✓ Աղմուկը նվազեցնելու և դրա ազդեցությունը մեղմացնելու համար անհրաժեշտ է շինարարական ճամբարները տեղադրել բնակավայրերից հեռու, աղմկաշատ գործողությունները հնարավորության դեպքում իրականացնել բնակելի շենքերից հեռու,
- ✓ աղմկաշատ գործողությունները կազմակերպել ցերեկվա ժամերին՝ խուսափելով գիշերային ժամերին աշխատանքներ կատարելուց,
- ✓ հնարավորինս նվազեցնել ծանր սարքավորումների տեղափոխումը բնակավայրերին մոտ տարածքներով,
- ✓ սարքավորումների վրա տեղադրել աղմկակլանիչ սարքեր:

Շինարարական աշխատանքների ընթացքում ծրագրի հարակից տարածքներում սարքավորումները կարող են թրթռում առաջացնել: Ցանկացած թրթռում, որն ունի վնասակար հետևանքներ, ժամանակավոր կլինի: Թրթռման ազդեցությունը տեղային կլիմայի և դժվար թե կառուցվածքային վնաս պատճառի կից շենքերին կամ մասնավոր սեփականությունների պատերին:

7.1.7 Առողջության ու անվտանգության վրա ազդեցություն

Աշխատանքային նախագծով նախատեսված շինարարության ժամանակ աշխատողները կարող են ենթարկվել ֆիզիկական մի շարք վտանգների որոնք կարող են հանգեցնել չնչին վնասների, հաշմանդամության կամ մահացու դեպքերի: Պատահարներ կառաջանան, եթե անվտանգության ընթացակարգերը և պրակտիկաները չգործեն: Բարձր աղմուկը կարող է լսողության ժամանակավոր կամ մշտական խանգարումներ առաջացնել: Բարձր աղմուկի ժամանակ մեքենա մեխանիզմների ու սարքավորումների վրա Կապալառուն պետք է տեղադրի խլացուցիչներ, աշխատակիցներին ապահովի ականջակալներով:

Աշխատանքները պետք է իրականացվեն աշխատանքային ժամերին, չխաթարելով բնակչության հանգիստը:

Վիբրացիան, գետի հունի մաքրման ժամանակ բերուկների հանման ու տեղափոխման աշխատանքները ու շարժման մեջ գտնվող մեքենաների մոտ աշխատելը նույնպես կարող են վնասներ հասցնել աշխատողներին:

Նախատեսվող գործունեության ժամանակ թրթռումները հիմնականում առաջանալու են մեքենա-մեխանիզմների աշխատանքից, որի մեծությունը չի գերազանցելու 126դԲ-ն:

Կապալառուն պետք է ունենա արդյունավետ անվտանգության ու առողջապահության պլան, ինչպես նաև վերապատրաստված առաջին օգնության անձնակազմ ու արտակարգ իրավիճակներին արձագանքող սարքավորումներ: Ծրագրի իրականացման ընթացքում պետք է մշակվի և իրականացվի բնապահպանական և անվտանգության կողմնորոշման ուսուցման ծրագիր: Դասընթացի ծրագիրը ներառում է

դասընթացներ շրջակա միջավայրի և առողջության և անվտանգության հարցերի վերաբերյալ, որոնք կազմակերպում են Կապալառուի շրջակա միջավայրի և անվտանգության մասնագետները: Տեղում աշխատողները պետք է տեղեկացված լինեն և վերապատրաստվեն շրջակա միջավայրի պահպանության, առողջության և անվտանգության ստանդարտ պահանջներին:

Աշխատակիցները պետք է ապահովված լինեն սանիտարական պայմաններով: Նախատեսվում է, որ բանվորները շինհրապարակում կապահովվեն խմելու ջրով, շարժական զուգարանով, կունենան նաև հանդերձարան ու ձեռքերը լվանալու և ցնցուղ ընդունելու հարմարանք:

8. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

8.1. ՀՀ օրենք շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության սկզբունքներն են՝

- նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության հնարավորության դիտարկումը.
- հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքով շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության կանխարգելումը, նվազեցումը և բացառումը.
- գնահատման ընթացքում ազդեցությունների, ներառյալ անդրսահմանային ազդեցության համալիր դիտարկումը.
- նախատեսվող գործունեության իրականացման այլընտրանքային, այդ թվում՝ գործունեության իրականացման բացառման, տարբերակների դիտարկման ապահովումը.
- հաշվետվությունների լիարժեքության, հավաստիության և գիտական հիմնավորվածության ապահովումը.
- պետական փորձաքննական եզրակացության հիմնավորվածության, օրինականության, օբյեկտիվության ապահովումը.
- գնահատման և փորձաքննության գործընթացների թափանցիկության, հրապարակայնության, շահագրգիռ հանրության մասնակցության ապահովումը.
- փորձաքննության արդյունքով շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, նվազեցման, բացառման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման կամ շրջակա միջավայրի վերականգնման ապահովումը:

Գնահատման և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն ըստ բնագավառների դասակարգվում են երկու կատեգորիայի՝ Ա, Բ՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի:

Ա կատեգորիան ներառում է այն նախագծերը, որոնք կարող են ունենալ բազմաթիվ զգալի բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի և ազդակիր բնակչության սոցիալական պայմանների վրա և պարունակել մեծ ռիսկեր: Ազդեցություններն ու ռիսկերը կարող են լինել զգալիորեն բացասական, եթե գործունեության մասշտաբները մեծ կամ շատ մեծ են, իրականացվում են խոցելի/զգայուն տարածներում (պահպանվող, գերխոնավ տարածքներ, բնական անտառներ, կարևոր մշակութային ժառանգության վայրերի և այլն), ազդեցություններն ու ռիսկերի անշրջելի են կամ նմանօրինակը չունեն: Ա կարգին են պատկանում նաև այն նախագծերը, որոնք ունեն էական անդրսահմանային ազդեցություններ կամ առնչվում են միջազգային պայմանագրերին ու կոնվենցիաներին, կարող են հանգեցնել հողային և ջրային ռեսուրսների սպառմանը:

Բ կատեգորիան ներառում է այն նախագծերը, որոնք որոշ չափով բացասական ազդեցություն են թողնում շրջակա միջավայրի և ազդակիր բնակչության սոցիալական պայմանների վրա և ոչ մեծ ռիսկեր են պարունակում և որոնք ավելի մեղմ են, քան Ա

կատեգորիայում ընդգրկվածները: Այս ազդեցությունները սովորաբար կարող մեղմացվել ժամանակակից մեթոդներով ու միջոցառումներով կամ ունեն ստանդարտ լուծումներ: Որպես կանոն, այս կարգի պոտենցիալ ազդեցությունները և ռիսկերը սահմանափակված են տեղական տարածքում, շատ դեպքերում վերականգնվում են և համապատասխան միջոցառումներ իրականացնելով դրանք հնարավոր է մեղմել կամ բացառել:

Ծրագրի շրջանակներում իրականացված Շրջակա միջավայրի նախնական գննությունը (ՇՄՆՁ) բացահայտել է, որ նախագիծը պատկանում է Բ կատեգորիայի, որի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության և սոցիալ-տնտեսական վիճակի վրա կարելի է մեղմել կամ բացառել համապատասխան միջոցառումներ իրականացնելով:

8.2. Շրջակա միջավայրի կառավարման պլան

Շրջակա միջավայրի կառավարման պլանը (ՇՄԿՊ) իրենից ներկայացնում է մեղմացնող և վերահսկող միջոցառումների համալիր, որոնք պետք է կատարվեն ծրագրի իրականացման ընթացքում՝ անբարենպաստ բնապահպանական կամ սոցիալական ազդեցությունները վերացնելու, դրանք նվազագույնի կամ թույլատրելի սահմանին հասցնելու նպատակով:

Շրջակա միջավայրի կառավարման համար պահանջվում են մեղմացնող միջոցառումներ, մոնիտորինգի ծրագրեր, չնախատեսված դեպքերի պլաններ (օր. արտակարգ իրավիճակների դեպքում, աղտոտող նյութերի չվերահսկված արտահոսք և այլն), վերահսկման պատասխանատու գերատեսչության, ճյուղային նախարարության, տեղական համայնքային ներկայացուցիչների միջև ստեղծված կապեր, անհրաժեշտության դեպքում շրջակա միջավայրի կառավարման աուդիտի իրականացում:

Շրջակա միջավայրի կառավարման պլան

ՇՄԿՊ-ն անհրաժեշտ է մանրամասն բնութագրել կոնկրետ ազդեցությունների դեմ իրականացվելիք մեղմացնող միջոցառումները, մասնավորապես՝

- մեղմացման աշխատանքի/գործողության նկարագիրը,
- ակնկալվող արդյունքը,
- իրականացման պատասխանատուն/ իրականացնող կազմակերպությունը
- իրականացման մոնիտորինգի համար պատասխանատու մարմինները

Շինարարական աշխատանքների ընթացքում ՇՄԿՊ-ն բերված է Աղյուսակ 20-ում, որտեղ յուրաքանչյուր պոտենցիալ ազդեցության համար տրված են առաջարկվող մեղմացման և մոնիտորինգի միջոցառումները և այդ միջոցառումների իրականացումը հսկող մարմինները:

Ամբողջությամբ ՇՄԿՊ-ը՝ հանդիսանալով մրցութային փաթեթի անբաժանելի մաս հետագայում կտրամադրվի շինարարությունը իրականացնող կաապալառու կազմակերպությանը:

Շահագործման ժամանակ բացասական ազդեցությունների ՇՄԿՊ-ն տրված է Աղյուսակ 21-ում:

Շրջակա միջավայրի մշտադիտարկումներ /մոնիթորինգ/

Նախատեսվող և հարակից տարածքներում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կտա ստեղծել տեղեկատվական հենք՝ հսկելու կայանի գործունեության հետագա շարունակական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ վնասակար ազդեցությունների կանխարգելման ու նվազեցման միջոցառումների մշակման համար:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին: Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ առաջարկվում է իրականացնել մոնիթորինգի հետևյալ միջոցառումները:

Աղյուսակ 20. Շինարարության ժամանակ իրականացվող մոնիթորինգի պլան

Վայրը/ գործողությունը/փուլը	Մոնիթորինգի ենթակա պարամետրերը	Մոնիթորինգի փուլը	Գործիքները և մեթոդները	Բնապահպանական միջոցառումների իրականացման ինդիկատորները	Պատասխանատու մարմինները	Հաճախականությունը և ժամանակը
Շինհրապարակ, մոտակա բնակավայր	Փոշու արտանետումներ	Հողային աշխատանքներ	Ասպիրացիոն սարք, կշռային	Տարածքի ջրցանում	Կապալառու	10 օրը մեկ
Թափոնների կառավարում և հեռացում	Շինարարական և կենցաղային թափոններ	Կուտակման համար սահմանված տեղամասեր	Տեսողական զննում	Աղբարկղերի տղադրում և տարածքներից դուրս բերում	Կապալառու	10 օրը մեկ
Մոտակա բնակավայր	Աղմուկ	Շինարարության ժամանակահատված	Աղմուկի չափման սարք	Շին.տեխնիկայի աշխատանքի կրճատում	Կապալառու	10 օրը մեկ
Հարակից տարածքներ	Բուսական և կենդանական աշխարհ	Դաշտային հետազոտություններ	Երթուղային եղանակով	Բուսականության ճնշվածություն, տեսակների կրճատում, կենդանիների պոպուլյացիաների տարածքից հեռացում, կրճատում և այլն	Մասնագիտացված կազմակերպություն	Շինաշխատանքների սկզբից 6 ամիս հետո
Հարակից տարածքներ	Շինհրապարակից դուրս տարածքներ	Տարածքների աղտոտում	Տեսողական զննում	Հարակից տարածքների աղտոտման արգելում	Կապալառու	Պարբերաբար
Վարարակ գետի հունի երկարությամբ	Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Շինարարության ժամանակահատված	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Գետի հունի աղտոտման արգելում	Մասնագիտացված կազմակերպություն	Շինարարության և ավարտին

Շինարարության ընթացքում շրջակա միջավայրի մոնիթորինգի համար նախատեսվում են հետևյալ ծախսերը՝

Մեկ կետի օդի նմուշարկման արժեքը կազմում է 15 000 դրամ x 4 x 12 = 720 000 դրամ

Մեկ կետում աղմուկի չափումը կազմում է 5000դրամ x 4x 12 = 240 000 դրամ

Ընդհամենը տարեկան 960 000 դրամ

Ռիսկերի գնահատում

Ծրագրի ՇՄԿՊ-ի իրականացման ժամանակ հնարավոր ռիսկերը.

1. Տրամադրվող ֆինանսական միջոցների անբավարարություն, որի արդյունքում վտանգի տակ կարող է դրվել ինչպես ամբողջ ՇՄԿՊ-ի, այնպես էլ նրա առանձին տարրերի լիարժեք իրականացումը:

2. Վերահսկող մարմինների կողմից ոչ պատշաճ հսկողության արդյունքում շինարարության ընթացքում ՇՄՊԿ-ի ոչ լրիվ կատարում կամ անտեսում:

3. Մոնիտորինգային մարմինների կողմից ոչ պատշաճ հսկողության արդյունքում շահագործման ընթացքում ՇՄՊԿ-ի որոշ տարրերի անտեսում:

4. Գործունեությունը նախաձեռնող/շահագործող կազմակերպությունների կողմից ինչպես ամբողջ ՇՄԿՊ-ի, այնպես էլ նրա առանձին տարրերի ոչ լիարժեք իրականացում:

Աղյուսակ 21. Վաչագան գետի հունի մաքրման և հենապատերի վերակառուցման բացասական ազդեցությունների կանխման շրջակա միջավայրի կառավարման և մոնիթորինգի պլան

Հնարավոր բացասական ազդեցությունը	Շրջ. միջավայրի և սոցիալական ոլորտի վրա ազդեցությունը մեղմոցնող միջոցառումներ	Իրականացնող գործակալություն	Վերահսկող գործակալություն	Նախահաշիվներ	Ժամանակացույց	Պետական մոնիտորինգ իրականացնող մարմին
<i>Շինարարական և կենցաղային թափոնների առաջացում և տեղադրում (3.21տ)</i>	Շինարարական և կենցաղային աղբի տեղադրման վերաբերյալ համապատասխան թույլտվության ստացում տեղական իշխանություններից	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխնիկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	մինչև շինարարության սկիզբը	ՀՀ ԲԸՏՄ ՏԻՄ
	Շինարարական աղբի տեղադրման կազմակերպում ըստ սահմանված կարգի ` այդ նպատակով հատկացված ուղեգծով և կուտակման տեղերում	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխնիկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում վերջնական ավարտից հետո	ՀՀ ԲԸՏՄ ՏԻՄ
	Կենցաղային թափոնների տեղադրում կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամաններում	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխնիկիչ	Գումար չի պահանջում	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում վերջնական ավարտից հետո	ՀՀ ԲԸՏՄ ՏԻՄ
<i>Օդի ժամանակավոր աղտոտում/փոշու առաջացում</i>	Փոշիացող շինանյութերի տողափոխման ժամանակ փակ/ ծածկված բեռնատար մեքենաների օգտագործում	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխնիկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՀՀ ԲՆ
	Շինարարական տարածքի պարբերաբար ջրցանում	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխնիկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՀՀ ԱԱՏՄ ՏԻՄ

Հնարավոր բացասական ազդեցությունը	Շրջ. միջավայրի և սոցիալական ոլորտի վրա ազդեցությունը մեղմոցնող միջոցառումներ	Իրականացնող գործակալություն	Վերահսկող գործակալություն	Նախահաշիվներ	Ժամանակացույց	Պետական մոնիտորինգ իրականացնող մարմին
	Փոշու ժամանակ բանվորների անհրաժեշտ պաշտպանիչ հարմարանքներով /շնչադիմակով/ ապահովում	Շինարարության կապալառու	Տեխսկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՀՀ ԱԱՏՄ
<i>Հողային և ջրային ռեսուրսների աղտոտում վառելանյութերով և քսայուղերով</i>	Անհրաժեշտ վառելանյութերի և քսայուղերի պահեստավորում մեկուսացված տարածքներում՝ հողային և ջրային ռեսուրսներից հեռու տարածքներում	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխսկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՀՀ ԲԸՏՄ
	Օգտագործված քսայուղերի հավաքման համար հատուկ տարողությունների նախատեսում, հետագայում դրանց հեռացում հատուկ տեղադրման վայրեր կամ վերամշակման համար հատկացված տեղանքներ	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխսկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՀՀ ԲԸՏՄ
	Գետի մեջ աշխատող տեխնիկայի անսարքությունների պարբերաբար ստուգում արտահոսքերից խուսափելու համար	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխսկիչ	Գումար չի պահանջում	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՀՀ ԲԸՏՄ
<i>Աղմուկի և տատանումների բացասական ազդեցություն</i>	Շինարարական աշխատանքների իրականացում աշխատանքային ժամերին, հակառակ դեպքում սահմանված կարգի համաձայն	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխսկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՏԻՄ

Հնարավոր բացասական ազդեցությունը	Շրջ. միջավայրի և սոցիալական ոլորտի վրա ազդեցությունը մեղմոցնող միջոցառումներ	Իրականացնող գործակալություն	Վերահսկող գործակալություն	Նախահաշիվներ	Ժամանակացույց	Պետական մոնիտորինգ իրականացնող մարմին
	Աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխնսկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՏԻՄ ՀՀ ԱԱՏՄ
	Աղմկահարույց սարքերով աշխատող բանվորների պատշաճ հարմարանքներով ապահովում	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխնսկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՀՀ ԱԱՏՄ
<i>Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով բնակչությանը պատճառած անհանգստություն</i>	Համապատասխան ճանապարհային նշանների կամ պատնեշների տեղադրում, անհրաժեշտության դեպքում շրջանցի կազմակերպում	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխնսկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՏԻՄ
	Շին աշխատանքների վերաբերյալ բնակչության համապատասխան իրազեկում	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխնսկիչ	Գումար չի պահանջում	մինչև շինարարական աշխատանքների սկիզբը	ՏԻՄ
<i>Ազդեցություն մշակութային և պատմական հուշարձանների վրա</i>	Հաղային աշխատանքներ կատարելու ժամանակ մշակութային արժեք ներկայացնող առարկաների հայտնաբերման դեպքում, աշխատանքների անմիջապես դադարեցում և այդ մասին տեղեկացում համապատասխան պետական գործակալությանը	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխնսկիչ	ըստ իրավիճակի	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՀՀ ԿԳՄՄՆ

Հնարավոր բացասական ազդեցությունը	Շրջ. միջավայրի և սոցիալական ոլորտի վրա ազդեցությունը մեղմոցնող միջոցառումներ	Իրականացնող գործակալություն	Վերահսկող գործակալություն	Նախահաշիվներ	Ժամանակացույց	Պետական մոնիտորինգ իրականացնող մարմին
<p><i>Հողի կողային էրոզիա և հողատարման պրոցեսներ</i></p>	<p>Կոյուղագծերի խրամուղիների, ինչպես նաև կարգավորչ և կոյուղաչափական հանգույցների փոտորոկների ետլիցքի հնարավորինս կարճ ժամանակահատված</p>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Կապանի համայնքապետարան, տեխնսկիչ</p>	<p>Ներառված է նախագծի արժեքի մեջ</p>	<p>շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում</p>	<p>ՀՀ ԲԸՏՄ</p>
	<p>Կոյուղագծերի անցկացման թեք տեղանքներում թեքությունները պահպանող անվտանգության միջոցների տեղադրում</p>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Կապանի համայնքապետարան, տեխնսկիչ</p>	<p>Ներառված է նախագծի արժեքի մեջ</p>	<p>շինարարական աշխատանքների ավարտից հետո</p>	<p>ՀՀ ԲԸՏՄ</p>
	<p>Շինարարական աշխատանքների ավարտից հետո հնարավորինս սեղմ ժամկետներում վնասված մակերեսների վերականգնում ըստ նախագծի</p>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>«Կապանի համայնքապետարան, տեխնսկիչ</p>	<p>Ներառված է նախագծի արժեքի մեջ</p>	<p>շինարարական աշխատանքների ավարտից հետո</p>	<p>ՀՀ ԲԸՏՄ ՀՀ ՏԿՆ</p>
<p><i>Շինարարների և սպառնացող վտանգներ</i></p>	<p>շին հրապարակը ցանկապատել, հսկել/արգելել կողմնակի մարդկանց մուտքը շին հրապարակ վտանգավոր վայրերում տեղադրել նախագուշացնող նշաններ պարբերաբար ստուգել սարքավորումները բարձրակարգ աշխատակիցների միջոցով</p>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>«Կապանի համայնքապետարան, տեխնսկիչ</p>	<p>Ներառված է նախագծի արժեքի մեջ</p>	<p>շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում</p>	<p>ՀՀ ԱԱՏՄ</p>


Հնարավոր բացասական ազդեցությունը	Շրջ. միջավայրի և սոցիալական ոլորտի վրա ազդեցությունը մեղմոցնող միջոցառումներ	Իրականացնող գործակալություն	Վերահսկող գործակալություն	Նախահաշիվներ	Ժամանակացույց	Պետական մոնիտորինգ իրականացնող մարմին
	<p>կանոնավոր կերպով իրականացնել մեքենա-մեխանիզմների անվտանգության ստուգումներ</p> <p>Կազմակերպել առաջին օգնության և անվտանգության դասընթացներ շինարանների համար</p> <p>բանվորներին ապահովել աշխատանքի համար անհրաժեշտ միջոցներով (արտահագուստ, կոշիկ, գլխարկ, ականջակալ, շնչադիմակ և այլն)</p> <p>աշխատակիցներին հրահանգավորել անվտանգության տեխնիկայի, արտադրական, սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ</p>					
Շինարարական հրապարակի աղտոտում	Շին. տեխնիկայի/ սարքավորումների համար տարածքի տրամադրում	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխսկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՏԻՄ
	Յուղերի/քսանյութերի պահեստավորում սահմանված կարգով	Շինարարության կապալառու	Կապանի համայնքապետարան, տեխսկիչ	Ներառված է նախագծի արժեքի մեջ	շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում	ՏԻՄ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՎԱՉԱԳԱՆ ԳԵՏԻ ՋՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՏԱՐԵԿԱՆ ԵԼՔԵՐԸ

Տարի	Ջրի տարեկան առավելագույն ելք, մ3/վրկ	Տարի	Ջրի տարեկան առավելագույն ելք, մ3/վրկ
1965	2,00	1989	1,78
1966	8,48	1990	2,28
1967	5,50	1991	1,95
1968	6,95	1992	2,18
1969	12,2	1993	6,30
1970	2,64	1994	4,05
1971	2,18	2004	3,05
1972	11,6	2005	2,12
1973	7,66	2006	1,45
1974	5,76	2007	2,04
1975	3,15	2008	1,55
1976	4,01	2009	1,32
1977	1,78	2010	1,92
1978	1,42	2011	0,95
1979	1,97	2012	11,6
1980	1,54	2013	4,82
1981	2,72	2014	5,68
1982	3,56	2015	10,5
1983	2,52	2016	1,85
1984	5,76	2017	2,24
1985	7,10	2018	4,12
1986	4,86	2019	2,62
1987	5,99	2020	2,01
1988	3,10	2021	2,29

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԻՐԱԴԻԱՑԻՆ ՍԽԵՄԱ

Կապան քաղաք





Դիտարկվող հատվածի
տեղադիրքը

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

**ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՎԱՉԱԳԱՆ ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ՈւՂԵԳԾԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ԵՎ ԳԵՏԻ ԲՆՈՐՈՇ ԿԵՏԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ**

ՎԱՉԱԳԱՆ ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ՈՒՂԵԳԾԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ
 ԵՎ ԳԵՏԻ ԲՆՈՐՈՇ ԿԵՏԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
 ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ
 Մ 1: 2000



Աշխարհագրական կոորդինատներ

Nº	X	Y
1	4341422.909	8620560.854
2	4341423.954	8620574.291
3	4341511.035	8620555.776
4	4341516.447	8620546.779
5	4341656.158	8620650.294
6	4341661.898	8620641.029
7	4341736.178	8620738.262
8	8620733.426	4341740.893
9	4341879.098	8620779.384
10	4341884.171	8620764.489
11	4341945.457	8620897.350
12	4341959.317	8620889.416

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սյունիքի մարզ, Կապան համայնք
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 169 « 22 » 10 2024թ.

Օբյեկտ Վաչագան գետի հարակից մայրի նորոգում, հենապատերի վերականգնում, նոր ճաղավանդակների տեղադրում /3-րդ փուլ/
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, և գործառնական նշանակության փոփոխություն)

միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III-րդ կատեգորիայի) օբյեկտ
(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

աշխատանքային

նախագծային փաստաթղթերի մշակման

համար (ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը «Սյունիքի մարզ, Կապան համայնք, Կապան քաղաք, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դիմացի կամրջից մինչև Մ.Ստեփանյան փողոցի թիվ 43 բ/բ շենքի հարևանությամբ ջրավազան
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Կապանի համայնքապետարան, ի դեմս համայնքի ղեկավար Գ.Փարսյանի, ք.Կապան, Չարենցի փողոց, թիվ 1
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը թերությունների ակտ
(կառուցապատման նպատակով «Օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը/

Առաջադրանքի գործունեության ժամկետը _____ /N1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան/

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԵՂԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ1:500)

1. Հողամասը գտնվում է բնակավայրերի նշանակության հողերում, ջրային հողերում
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային, և գործառնական նշանակությունը/

2. (*) Հողամասի չափերը _____ /հողամասի սահմանները՝ կորդինատային նշահարմամբ, մակերեսը հա/

3. Հողամասի առկա վիճակը _____ **կառուցապատված**
(ոելիեֆի բնութագիրը շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը նշանակությունը, հարկայնությունը շինարարական նյութերը և այլն) կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները _____ **առկա են**
(ճանապարհների առկայությունը երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն/

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) _____ **համաձայն ներկայացված սխեմայի**
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

12.5 Թույլ հոսանքներ

12.6 Աղբահանում

13. Տարածքի ինժեներական

Նախապատրաստում

/ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները/

«Կապան համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ պայմանագիր

կազմակերպված ջրահեռացում, ռելիեֆի կազմակերպում

14. Բարեկարգում **տարածքի բարեկարգում, մայրի սալիկապատում**

/լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն/

15. Շինարարական նյութեր **բազալտե եզրաքար, ցեմենտ, ավազ, խիճ, ամրան, մետաղական կոնստրուկցիաներ և այլ շինարարական նյութեր**

/շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ/

16. Պաշտպանական կառույցներ

/արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները/

17. Հակահրդեհային պահանջներ **համաձայն գործող հակահրդեհային նորմերի**

/հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները/

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի

պաշտպանության միջոցառումներ **համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006թ. նորմերի**

19. Շրջակա միջավայրի պահպանում **շին.աղբը կազմակերպված տեղափոխել 11,0 կմ հեռավորության վրա՝ աղբավայր**

/շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները/

20. Շինարարության կազմակերպում **սահմանափակել շին. տարածքը, կազմել աշխատանքների իրականացման ժամանակացույց**

/առաջարկություններ, շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ/

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և

նախագծի մշակման փուլերը **1,5 (մեկ ու կես) տարի, 1 (մեկ) փուլ**

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը

ներկայացվող պահանջներ **նախագծի պարզ փորձաքննություն**

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտի վրա)

23. Միջանկյալ համաձայնեցում **Կապանի համայնքապետարան**

(իրավասու մարմնի հետ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքերում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ

մասնագիտական եզրակացությունների ստացում

ՇՄԱԳ

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջը հուշարձանների ու բնության պահանջության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելված 56-րդ կետով սահմանված դեպքերում ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահպանման տեղադրում

27. Այլ պայմաններ **նախագիծը համաձայնեցման ներկայացնել 2 /երկու/ օրինակից**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐ**




/ստորագրությունը/

ԳԵԿՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ


/անուն, ազգանունը

**ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՎԱՉԱԳԱՆ ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:2000
ԵՎ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ՄԿՋԲՆԱԿԵՏԵՐԻ, ՎԵՐՁԱԿԵՏԵՐԻ ՈՒ
ԲԵԿՄԱՆ ԱՆԿՑՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ**

ՎԱՉԱԳԱՆ ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:2000 ԵՎ ԿԱՌՈՒՅՎՈՂ
 ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ՍԿՋԲՆԱԿԵՏԵՐԻ, ՎԵՐՋՆԱԿԵՏԵՐԻ ՈՒ ԲԵԿՄԱՆ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ
 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ



Աշխարհագրական կոորդինատներ		
№	X	Y
1	4341609.213	8620607.910
2	4341633.653	8620621.574
3	4341653.392	8620635.137
4	4341693.936	8620666.564
5	4341713.986	8620698.831
6	4341724.436	8620713.913
7	4341744.815	8620734.840
8	4341753.001	8620740.493
9	4341759.316	8620743.395
10	4341763.095	8620744.323
11	4341807.637	8620751.607
12	4341865.323	8620755.789
13	4341877.712	8620757.727
14	4341894.663	8620764.717
15	4341912.237	8620773.868
16	4341921.906	8620781.205
17	4341928.783	8620787.912
18	4341942.064	8620802.452
19	4341956.734	8620833.821
20	4341960.205	8620851.482
21	4341959.318	8620889.414



ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Պահանջվող փաստաթղթերի փաթեթը ներկայացվում է էլեկտրոնային կրիչի վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ նոր օրենք «Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» մայիս, 2023
2. ՀՀՇՆ II-7.01-2011 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. Հարավային ջրավազանային կառավարման պլանի համապատասխան ենթաբաժինների վերանայված տարբերակ, Վերջնական հաշվետվություն, մարտ, 2022
4. ՀՀՇՆ II-6.02-2006 «ՄԵՅՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ քաղաքաշինության նախարարի 3 փետրվարի 2006 թվականի N 24-Ն հրաման
5. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականավման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության N 1325-Ն որոշում, 19 նոյեմբեր, 2014թ.
6. «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N160-Ն որոշում, 2 փետրվարի, 2016թ.
7. Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե: «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2007թ.
8. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям. ОНД – 84 – Н
9. “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ” հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N 91 – Ն Որոշմամբ
10. “Քոռ ինվեստորի օֆ էմիշնսս ին Երոփ” (CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում”
11. www.armmonitoring.am
12. www.arlis.am